

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لویس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446



# 182, Դեկտեմբեր 2013 թ. No 182, December 2013 ۱۳۹۲ آذر ماه شماره ۱۸۲

# Այս համարում Չայերեն բաժին

- 1- Մպետակի աղետալի երկրաշարժը, 1988.....1
- 2- Իրանահայ Համայնք.....2
- 3- Հայաստան.....4
- 4- Արցախ.....8
- 5- Արեւմտյան Հայաստան.....9
- 6- Միջազգային.....10
- 7- Մշակույթ .....16
- 8- Խոհեր.....19
- 9- Գծանկարչություն.....20
- 10- Հայերեն-պարսկերեն առածանի.....20

## Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր.....1-4



**Ճապիկի առաջին էջում`** Գեւորգ Չաուշի այրու` Հեղինեի (Եղսո) բնօրինակ լուսանկարը:

**Վերջին էջում`** Լույս է տեսել Էդ. Բաղդասարյանի «Չայ Պետականության Պատմություն»-ը 7 հատորով Իրանահայ Չամայնքի Ամբողջական Պատմությունը 10 հատորով

Համար 182, դեկտեմբեր 2013 թ.

No. 182, Decemberr 2013

ماهنامه لویس - شماره ۱۸۲ آذر ماه ۱۳۹۲

## ԼՈՒՅՍ

### Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր`

**Էդ. Բաղդասարյան**

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ` louys\_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն` www.louysonline.com

**LOUYS**

**Armenian Cultural and Social Monthly**

License-holder and Editor-in-Chief

**Ed. Baghdasarian**

www.Edic-Baghdasarian.com

**POBox 15875-9488 Tehran – Iran**

**E-mail : louys\_monthly@yahoo.com**

**Internet : www.louysonline.com**

**Թերթի Գինը`** Չատավաճառ - 5000 դիալ

**Բաժանորդագրություն`**

Իրան` մեկ տարի` 60,000 դիալ

Արտասահման` մեկ տարի` 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

# Սպիտակի աղետալի երկրաշարժից 25 տարի է անցել




**1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի աղետալի երկրաշարժից 25 տարի է անցել, սակայն Հայաստանում դեռ կան երկրաշարժից տուժած ընտանիքներ, որոնք շարունակում են ապրել մետաղյա ժամանակավոր տնակներում:**

Իսկ որոշ բնակավայրերում, ինչպես Գյումրին, դեռ կան երկրաշարժի հետևանքով ավերված շինություններ, որոնք դեռևս ապամոնտաժված չեն:

Հիշեցնենք, որ 1988-ի երկրաշարժն ընդգրկեց հանրապետության հյուսիսային և հյուսիսարևելյան շրջանները` նրա տարածքի մոտ 40%-ը: Հաշված վայրկյանների ընթացքում լրիվ կամ մասնակի ավերվեցին Սպիտակ, Լենինական, Կիրովական, Ստեփանավան քաղաքները, Սպիտակի, Ախուրյանի, Գուգարքի, Արագածի, Կալինինոյի, Ստեփանավանի շրջանների հարյուրից ավելի գյուղեր ու բնակավայրեր: Ձոռվեց 25 հազարից ավելի մարդ, 500 հազարը մնաց անօթևան: Շարքից դուրս եկավ բնակֆոնդի 17%-ը, շուրջ 8 մլն քառ. մ բնակելի տարածություն: Դադարեցին գործել 170 արդյունաբերական ձեռնարկություններ, շուրջ 1200 անասնապահական շինություններ ավերվեցին: Հայաստանի տնտեսությանը հասցված վնասը կազմեց 13 մլրդ ռուբլի:

Ի՞նչ է փոխվել ողբերգությունից 25 տարի անց: Անօթևան մնացած ընտանիքներից քանի՞սն են փոխհատուցում ստացել, քանի՞սը` ոչ:

Գյումրիի ավազանու անդամ, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ-ի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանի խոսքերով` այսօր Կառավարությունը 4000-ից ավելի անօթևան ընտանիքներից անօթևան են ճանաչում մոտավորապես 1200-ին, մյուսների մասին ասում են, թե մենք նրանց առաջ պարտավորություն չունենք:





100-ն էլ պլանավորվում է կառուցվել արդեն 2014թ-ին: «Բնակարանաշինությունը, կարելի է ասել, արդեն ավարտին է հասցվել, պետական բնակարան կորցրածներից բոլորին բավարարել են, բացի մեկ սենյականոց բնակարան կորցրած ընտանիքներից, որոնց համար էլ այդ 100 բնակարանը պետք է կառուցվի», - ասաց նա:

Ինչ վերաբերում է սեփական տներին, ապա այստեղ դեռ բավական թվով ընտանիքներ երկրաշարժից հետո շարունակում են անօթևան մնալ: «Սեփական տների համար երկրաշարժից հետո պետությունը փոխհատուցում տվել է մարդկանց, բայց ինչ-ինչ պատճառներով որոշ մարդիկ դա չեն օգտագործել նպատակի համար: Հիմա մեր հանրապետության նախագահը խոստացել է անդրադառնալ այդ հարցին՝ պետական բնակարան կորցրած մարդկանց խնդիրների լուծումից հետո», - նշեց նա:

Գագիկ Սահակյանը նշեց, որ այսօր քաղաքում ավերակ շենքեր չունեն: «Բնակֆոնդը և՛ քաղաքի, և՛ նաև արտադրական բոլոր մակերեսները, այդ թվում նաև մշակույթի տուն, դպրոցներ, ամբողջությամբ ավերվել էին, 100%-ով, հիմա բոլորը վերականգնվել են ու գործում են շատ նորմալ, այդ ոլորտում խնդիրներ չունենք», - ասաց նա:

Թե որքանով է քաղաքի բնակչության թիվը կրճատվել 25 տարիների ընթացքում, քաղաքապետը նշեց, որ երկրաշարժից առաջ Սպիտակն ունեցել է շուրջ 20 000 բնակիչ, այսօր արդեն նրանց թիվը 16 400 է: «Երկրաշարժից Սպիտակում զոհվել է 4003 մարդ», - նշեց Գագիկ Սահակյանը:

## ԱՄԱՆՈՐ

Հայաստանում ամենասիրված ու լայն ժողովրդայնություն վայելող տոներից մեկն է Ամանորը՝ Նոր Տարին: Ամանորը, ըստ էության, Նավասարդ բառի հայացումն է: Ամանոր՝ զենդերեն նշանակում է Նոր Տարի (Նաւ - նոր, սարեդա - տարի): Ամանորը մեզանում կոչվում է նաեւ Կաղանդ, որը հունական ծագում ունի եւ նշանակում է յուրաքանչյուր տարվա առաջին օրը: Հնագույն ժամանակներում հայերը Ամանորը տոնում էին Նավասարդ ամսին, դա համապատասխանում էր այսօրվա օգոստոսին: Մեծ տոնախմբությամբ էր նշվում տարվա առաջին օրը: Կազմակերպվում էին խրախճանքներ, մասսայական խաղեր, ծիարշավներ, թատերախաղեր, սուսերամարտեր: Աստվածներին մատուցում էին զոհաբերություններ: Այդ տոնախմբությանը մասնակցում էին նաեւ թագավորը, իշխանները, բարձրաստիճան պալատականները, զինվորականները: Մասսայական խաղերի, ծիարշավների ժամանակ, երիտասարդությունը ցուցադրում էր իր ճարպկությունն ու դիմացկունությունը: Տոնակատարության ընթացքում այգեպանները, հողի աշխատավորները սեղանների վրա դարսում էին իրենց առաջին պտուղները՝ ծիրանը, դեղձը, տանձը, խնձորը, խաղողը եւ տեսակ-տեսակ այլ բարիքներ, տանտիկիները՝ քաղցր շարոցը (սուջուխը), ալանին, ընկուզն ու բազմատեսակ չոր մրգերը: Նրանք առատորեն հյուրասիրում էին տոնակատարության մասնակիցներին, ուրախանում ու հպարտանում նրանց գովեստներին:

Չիարշավների ժամանակ երիտասարդներն օդ էին բռնում բազմաթիվ աղավնիներ, բացվում էր հիասթափ տեսարան, կապուտակ երկնքի վրա օդը թրատում էին բազմաթիվ թեւավորներ, իսկ նրանց թեւերի թափահարումից առաջացած փոթորակը ծայրերը ուրախությամբ էին լցնում շրջապատը: Հայ դիցաբանության մեջ Ամանորի Աստվածը հանդիսանում էր պտղաբերություն պարգեւող՝ պտուղների, բերքի պահպանը եւ մարդկանց սնուցողը: Նա նաեւ հյուրընկալության խրախուսողն էր: Դեռեւս վաղ ժամանակներում հայերի համար հյուրասիրությունն ու հյուրընկալությունը սրբացված հասկացողություն էր, որը պահպանվում էր Աստծո կողմից: Հյուրասիրության հետ կապված մեզ են հասել բազմաթիվ ավանդություններ, ասացվածքներ, որոնք պահպանվել են մինչեւ օրս եւ ստացել են թեւավոր խոսքի նշանակություն, այսպես օրինակ, «Տո՛ւն իմ տուն չէ՛, տուն դուս բացողին է», «Դո՛նաղն Աստծունն ա», «Պանիր հաց, սիրտը բաց», «Դո՛նաղն տան տիրոջ վարդն ա» եւ այլ ասացվածքներ: Հետագայում Տոմարի կազմության փոփոխության հետ Ամանորը, որպես հեթանոս Աստծո պաշտամունք, մոռացության մատնվեց, եւ հայերը սկսեցին Ամանորը՝ Նոր Տարին տոնել հունվար ամսին: Պահպանվեց իմաստը՝ Նոր Տարի, տարեմուտի առաջին օրը, տարին նորոգող տոնի հասկացությունը, իսկ ժամկետը փոփոխության ենթարկվեց: Այժմ տարեմուտի տոնակատարությունը, ինչպես շատ ժողովուրդների մոտ կատարվում է հունվարի 1-ից մինչեւ 6-ը: Մեզանում այդ տոնը տարբեր ավանդումներ ունի՝ Ամանոր, Կաղանդ, Վանասուր, Ամենաբեղ: Թերեւս տոնի հեթանոսական ծագումն է պատճառը, որ Ամանորը քրիստոնեական տեսակետից եկեղեցում որեւիցե ծիսակատարություն չունի, միայն այդ օրը, որպես Նոր Տարի, մատուցվում է Սուրբ Պատարագ:

Նոր Տարին հնարավոր չէ պատկերացնել առանց տոնածառի: Եվրոպայում տոնածառը զարդարում են Ս. Ծննդյան տոնի նախօրեին, եւ ազգականներն ու բարեկամները միմյանց նվերներ են պատրաստում ու նվիրում: Հայաստանում տոնածառը զարդարում էին Նոր Տարվա նախօրեի գիշերը, իսկ Ս. Ծնունդը տոնում էին հունվարի 6-ին, որը պահպանվել է մինչեւ այժմ: Մեզանում ծառի պաշտամունքը գոյություն է ունեցել վաղ ժամանակներից: Դեռեւս հեթանոսական ժամանակաշրջանից պաշտամունքի առարկա են եղել բնությունը, անտառները, ծառերը: Գերեզմանատներում տնկում էին գեղեցիկ, հազվագյուտ ծառեր ու ծաղիկներ, որովհետեւ հավատում էին հոգու անմահությանը, որ մեռածի հոգին շրջում է բնության գրկում եւ բնակվում է ծառերի ստափյունի, ծաղիկների նագանքի, զեփյուռի ու թիթեռնիկների թեւիկների նրբին տրոփյունի մեջ: Բնության պաշտամունքի խորհրդանիշ են եղել սոսին, ուռեմին, բարդեմին:

Հայաստանում ծառը համարվել է նաեւ ընտանիքի, գերդաստանի հավերժության խորհրդանիշ: Աստվածաշնչում նույնպես հիշատակվում է «Կենաց ծառը» կամ «Իմաստության ծառը»: Այսօր էլ հայ ընտանիքներում սովորություն կա գերդաստանի պատկերը տալ ծառի ձեւով, իսկ նրա մոտակա ու հեռակա ճյուղերի միջոցով արտահայտել ազգակցական կապերը:

Շատ հավանական է, որ ծառի պաշտամունքը հայկական որոշ տոների ժամանակ, անմիջականորեն առնչվել է կենտրոնացել է Նոր Տարվա տոնածառի մեջ: Ծառի պաշտամունքը մեզանում արտահայտվել է նաեւ որոշակի տոնակատարությամբ, որը կոչվել է ծաղկազարդ՝ որպես գարնանային օրվա, բնության զարթոնքի պաշտամունքի տոն: Ծաղկազարդի արմատները սնվել են հեթանոսական շրջանի հին սովորություններից, որի նախնական իմաստն այսօր մոռացության է մատնվել, ստացել է քրիստոնեական նշանակություն եւ պահպանվել է տոնածառի, ծաղկազարդ տոնի, խաղողօրհների խորհրդապաշտական ծիսակատարություններում: Այդ տոնակատարություններն անմիջականորեն կապված են հայ իրականության հետ, հայկական երեւոյթ են: Սակայն բոլոր ժողովուրդների մոտ կան կենցաղային, բանահյուսական, ծիսական եւ այլ սովորությունների ընդհանրություններ, այդ համագամանքի

արտահայտություններից է նաև եղենին, որի պաշտամունքը իր տարբեր դրսևորումներով պահպանվել է աշխարհի համարյա բոլոր ժողովուրդների մոտ: Նոր Տարվա խորհրդանիշն է նաև Չմեռ Պապին, «Կաղանդ Պապան» կամ «Մենծ Պապուկը»: Եվրոպայում Չմեռ Պապիկին անվանում են «Պապա-Նոյել» կամ «Սանթա Բլուզ», իսկ Ռուսաստանում «Դեդ Մորոզ»: «Կաղանդ Պապուկի» հասկացությունը Հայաստանում կրկին առնչվում է հնագույն ժամանակների հետ և հայկական երեսույթ է: Դեռես վաղ շրջանում դիմակներով հանդես գալը, երեխաներին զվարճացնելն ու նրանց նվերներով ուրախացնելը նշանավորվում էր առանձին տոնակատարությամբ՝ Բարեկենդանի խրախճանքներով: Մենծ Պապուկի տոնն անվանվում էր Ս. Պարթևի օր և երեխաների ամենասիրված տոնախմբություններից մեկն էր: Նշվում էր Ս. Սարգսի տոնին հաջորդող օրերից մեկի ժամանակ: Ամբողջ գերդաստանը տանն էր անցկացնում, սեղանը լիքն էր լինում տեսակ-տեսակ կերակուրներով: Երբ խրախճանքը իր գագաթնակետին էր հասնում, ընտանիքի մեծը, զաղտնի դուրս էր գալիս և որոշ ժամանակ անց ներս էր մտնում գլխին դրված սրածայր «քոլոզ», ձեռքին մեծ գավազան, դեմքին բրդից սարքված բեղեր ու մորուս, իսկ կռակին ոչխարի մորթի և մեծ տոպրակ՝ մեջը երեխաների համար նվերներ՝ խաղալիքներ, քաղցրավենիք: Նրա երեւալը մեծ ուրախություն էր պատճառում բոլորին, անշուշտ, մասնավորապես, մանուկներին: Սկսվում էին կատակները, ուրախությունները, որոնք ուղեկցվում էին երգ ու պարով: Վերջապես Մենծ Պապուկը իր տոպրակից հանում էր նվերները, բաժանում երեխաներին, իսկ մեծահասակներին հրամցնում մի - մի բաժակ անուշահամ կարմիր գինի՝ ասելով «Եկավ Մենծ Պապուկը, հազար բարով Բարեկենդանը»: Եվ այդ օրվանից՝ Սահակ Պարթևի տոնից անմիջապես հետո սկսվում էին Բարեկենդանի խրախճանքները:

Այսպիսով, Մենծ Պապուկի նախնական իմաստը մոռացության է մատնվել, ինչ-որ չափով փոխվել է նաև նրա հանդես գալու ժամանակը և կապվել Ամանորի տոնակատարությունների հետ: Այժմ մեզանում Նոր Տարին, ինչպես աշխարհի շատ ժողովուրդների մոտ, առանց Չմեռ Պապի հնարավոր չէ պատկերացնել: Հատկանշականն այն է, որ յուրաքանչյուր տարիք Հայաստանում ունի իր տոնն ու դրան համապատասխան արտահայտչամիջոցները՝ իր որոշակի խորհրդանիշ-երեխաների հետ կապվում էր և այսօր էլ նույն նշանակությամբ է հանդես գալիս Չմեռ Պապին, իսկ համբարձման տոնակատարությունն ու վիճակ հանելու սովորությունը, նաև Ս. Սարգսի տոնը անմիջականորեն առնչվում են երիտասարդ աղջիկների՝ նորահարսերի հետ, ծաղկագաղղը, Կարմիր-կանաչ կիրակին, Բարեկենդանն առավելապես վերաբերում է երիտասարդներին:

Ավելի ուշ, Հայաստանում Նոր Տարին սկսեցին նշել տարեվերջի նախորդ օրվա գիշերվա ժամը 12-ին, առատ սեղանի, խմիչքեղենի, ուրախ ժամանցի, երգ ու պարի, երաժշտության ուղեկցությամբ: Այդ սովորությունը պահպանվել է մինչև օրս. հին վավանդության համաձայն ինչպես անց են կացնում Նոր Տարին, ուրախ, թե տխուր, այդպես էլ կշարունակվի ամբողջ տարվա ընթացքում: Դա մշտապես եղել է ուրախության, առատության տոն, միաժամանակ Նոր Տարին դարձել է անցած տարվա կատարվածի, հանրագումարի ու հաշվետվության օր: Նոր Տարին դիմավորելու համար մի քանի օր առաջ հայ ընտանիքներում սկսվում են ամանօրյա պատրաստությունները: Ամենակարեւորը հաց թխելու գործն է, որը կատարում են ընտանիքի տարեց կանայք: Նրանք մեծ տաշտակի մեջ խմոր են հունցում՝ հայկական խնկաբույր լավաշ թխելու համար, իսկ տան երիտասարդ աղջիկներն ու հարսերը օգնում են նրանց: Խմորը շատ պարզ է, սակայն աշխատատար է, պահանջում է հմտություն և ուժ: Անհրաժեշտ է լավ հունցել, պահպանել հասունության ճիշտ ժամանակն ու ճարտար ձեռքերով գրտնակել:

**Իրանահայ Համայնք**

**Խոյի կոտորածից վերապրած տիկին Նուբարի հարսը սկեսուրի մասին է պատմում**

27/11/2013



Մեր նախորդ գրոյցում, կատարած բնիկ Սալմաստեցի Պրն. Սարգիս Սայեադեանի հետ, նշել էինք թե՛ նա անդրադարձել էր Խոյի կոտորածին **¥1918թ.թ.**, որի հետևանքով բազմաթիւ այրիներ, որբեւայրիներ ու որբեր իսլամացել էին, տղամարդկանց կոտորումից յետոյ: Այնտեղ նաև նշել էր շուրջ 100ամեայ մեր գրուցակիցը, թե Ատրպատականի Հայոց Թեմի այդ օրերի Առաջնորդ հոգեւոյս Տ. Ներսէս Արք. Մելիք-Թանգեանը իր հանգամանքը պարտադրելով տեղական իշխանութիւններին, իր ժողովրդի կորած այդ բեկորներին ազատագրել էր և վերադարձրել իրենց ազգային ու կրօնական արմատներին:

Վերոյիշեալ գրոյցում նաև յիշել էր, թե՛ Մելիք-Թանգեան Սրբազանը եկեղեցու խորանից կոչ էր արել ժողովրդի ամուրիներին, Խոյից վերապրած այրիների հետ ամուսնանալ ու հայկական նոր օջախներ կազմել: Պրն. Սայեադեանը յիշել էր նաև, թե Սառնացի Արշակը, Սրբազանի կոչին անսացող անձերից էր, որ Խոյեցի այրի տիկ. Նուբարի հետ էր ամուսնացել և երեք մանչ զաւակ նրանից էր ունեցել:

Երեքշաբթի 19 Նոյեմբեր 2013-ին, մենք հանդիպեցինք Տիկ. Նուբարի հարսի՝ Տիկ. Յասմիկ Ստեփանեանի և թոռան՝ Տիկ. Արմինէ Նազարեանի հետ, որոնք ապրում են Թւրիքում: Զրոյցի մասնատր սոյն առիթը ստեղծեցինք, նախ իբրև շարունակութիւնը մեր նախորդ գրոյցի, և երկրորդ՝ որպէսզի մեր ժողովրդի կրած տառապանքների ազդեցութիւնների վերլուծումը կատարողներին ներկայացնենք ջարդից ու կոտորածից վերապրածների հոգեբանական դրոպիւնը, որը

անպայման արտայայտություն գտած պետք էր լիներ նրանց հետագայ կեանքում:

## Երկրորդ ամուսնությունը

Ինչպես պատմում են իր հարսն ու թոռը, Տիկ. Նուբարը Խոյի կոտորածից յետոյ, որի ընթացքում կորցրել էր իր ամուսնուն, երկրորդ ամուսնություն է կնքում Արշակ Ստեփանեանի հետ, որը Մելիք-Թանգեան Սրբազանի յորդորը լսելով, հենց Խոյում գտնում է Նուբարին ու այնտեղ էլ պսակում նրա հետ: Արշակը իր առաջին ամուսնությունից ունեցել է երկու զուգակներ՝ Յակոբ եւ Լիզա, որոնք բնականաբար կազմած նոր ընտանիքի հարազատ անդամներ են դառնում, ու հետագայում երբեք խորթութեան զգացում չի՝ եղել երեխաների մէջ: Իսկ Տիկ. Նուբարը առաջին ամուսնությունից զուակ չի ունեցել:

Խոյում թէ՛ Արշակը եւ թէ՛ Նուբարը վերամուսնանալուց յետոյ ունենում են իրենց առաջին զուակին՝ Բագրատին: Ապա ծնում է Սմբատը, որը կարմրուկ հիւանդությունից բռնելով մահանում է շատ վաղ հասակում: Այդ վախճվ միշտ էլ մնացել է Նուբարի հոգում, եւ յաճախ զգուշացրել է իր հարսերին ու բոլոր ծանօթ մայրերին, որ երեխեքը կարմրուկ չբռնեն ու չհիւանդանան:

Տիկ. Նուբարը նաեւ ինքնուս ակնաբոյժ է եղել: Նրա յաճախորդները իրեն կոչել են «Հաքիմ»: Իսկ այդ յաճախորդների թւում են եղել հայ եւ օտար, ու մանաւանդ քուրդ հիւանդներ, որոնց բոլորին էլ բուժել է բուսական դեղերով:

Ինչպես պատմում է իր հարսը՝ Յասմիկ, նա յատկապէս բուժել է կախ կոպերի հիւանդությունից տառապողներին, փայտեայ յատուկ ցպիկներով վեր բարձրացնելով կոպերը, ու աւելորդ մաշկը չորացնելով: Նաեւ կոպերի ներսում յայտնուող փշտիկներ ոչնչացրել է յատուկ շաքարեղէն նիւթեր օգտագործելով ու բուսական այլ դեղեր սարքելով: Ինչպէս յիշում է հարսը, մինչեւ իր յառաջացած տարիքը, Տիկ. Նուբար ուներ մասնաւոր մի տուփ, որի մէջ շարում էր իր պատրաստած ակնաբուժական դեղերը:

## Փախուստ դէպի Հայաստան

Վախենալով հալածանքից, Արշակը վերցնելով իր ընտանիքին ժամանակաւորապէս փախնում է Հայաստան եւ հաստատում Արտաշատ գիւղում: Տեղացի հարեանների ու ծանօթների խորհրդատուութեամբ, հազիւ երկու տարեկան Բագրատին յանձնում են պարսիկ հարեանին, իմացած լինելով որ ճանապարհին փոքր երեխեքին թալանում են, իսկ ծնողներին՝ դրանց պատճառով սպանում: Շատ սիրուն փոքրիկ լինելով Բագրատը, ծնողները աւելի են մտահոգւում եւ մի քանի ամսւայ համար յանձնում հարեանին:

Դէպի Հայաստան ժամանակաւոր այս փախուստից տարիներ են անցնում: Այնտեղ, ինչպէս յաճախ է յիշել Տիկ. Նուբարը, Արտաշատի պարիսպի տակ ծնում է իրենց Սուրիկ որդին, որը հետագայում ամուսնանալու

էր մեր զրուցակցին՝ Տիկ. Յասմիկի հետ: Հայաստան մեկնումից տարիներ անց, եւ Սուրիկի ծնելուց 40 օրեր յետոյ, Արշակը որոշում է վերադառնալ Պարսկաստան, ու հաստատում է հայաշատ Սալմաստի Մառնա գիւղում:

## Բագրատի ողիսականը

Հայաստանից վերադարձին, զուր են անցում Արշակի ու Նուբարի ջանքերը, Խոյում գտնելու իրենց զուակին՝ Բագրատին, որովհետեւ այդ իսլամ հարեանները տեղափոխւել էին, ու ո՛չ ոք չէր իմանում նրանց որտեղ գնացած լինելը: Փաստօրէն արդէն տարիներ էին անցել, եւ Բագրատը, որ մեծացած պետք էր լինէր, նաեւ իսլամական կրօնի հետեւորդ դարձած պիտի լինէր...:

Տիկ. Նուբարը միշտ յիշել է, եւ այնքան ցանկութիւն է յայտնել անպայման գտնել նրան, որ Արշակի որդին՝ Յակոբ, մասնաւոր փնտրուք է կատարել: Շատ տարիներ անց, իմանալով որ Բագրատը ինամելու պարտականութիւնը ստանձնած ընտանիքը Ահազ է փոխադրւել, Բագրատի մանկութեան մէկ լուսանկարը դրել են Ահազ քաղաքի թէյատներին մէկում: Եւ մի օր Բագրատը յայտնում է այնտեղ...: Բեռնատարի վարորդ դարձած Բագրատը իմանալով թէ հարազատներ փնտրում են իրեն, չի՛ ցանկանում հանդիպել նրանց հետ, եւ թէյատան տիրոջ օտ թողելով իր մէկ լուսանկարը, յայտնում է, թէ այնպէս ինչպէս մինչեւ հիմա կորած կամ մեռած են կարծել իրեն, այդպէս էլ թող շարունակեն մտածել...:

Բագրատի այս կեցածքի մասին Ստեփանեան ընտանիքը շատ է մտածել հետագայում, եւ յանգել այն եզրակացութեան, թէ՛ նա իր կրօնական նոր պատկանելիութիւնը նկատի ունենալով զգուշացել է այդ հանդիպումից, մանաւանդ որ նա արդէն ընտանիք էր կազմել, ու զուակների տէր էր դարձել: Եւ Բագրատը այդպէս էլ կորչում է պատմութեան մառախուղում, իր հետքը անյայտացնելով...:

## «Հայերդ կեղտոտ էք»

Խոյում մնացած այրիներից բոլորն էլ չկարողացան հաստատուել Թաւրիզ կամ ընդհանրապէս դուրս գալ Խոյից, մանաւանդ նրանք՝ ովքեր արդէն ամուսնացել էին իսլամների հետ ու զուակներ ունեցել: Այդ այրիներից էր Մարիամը, Տիկ. Նուբարի ընկերուհիներից, որը մինչեւ 15 տարի առաջ ողջ էր ու յաճախ գալիս էր Թաւրիզ, այցելելու իր ընկերուհի Տիկ. Նուբարի հարազատներին: Ինչպէս պատմում է տիկ. Յասմիկը, որը ներկայ է եղել սոյն այցելութիւններին, Մարիամը յաճախ յիշել է որ ընտանեկան պարագաները այնպէս էլ երբեք «չեն ընդունել», քրիստոնէութիւնից դարձած իսլամ համարելով իրեն: Մարիամը ո՛չ միայն զուակներ ունեցել էր, այլ իր տղաներին էլ ամուսնացրել ու թոռների տէր դարձել: Սակայն իր հարսներն անգամ միշտ ստորադասել են իրեն, իբրեւ յետոյ իսլամացած անձի: Տիկ. Յասմիկը վկայում է, թէ Մարիամը միշտ դժգոհում էր իր իսլամ հարսներից, որոնք ամեն առիթով

յանդիմանում ու պախարակում էին իրեն, երբ հաց թխելու կամ կերակուր սարքելու համար ձեռք էր մեկնում նրանց, ասելով.

– Ձեռք մի՛ տուր, դուք հայերդ կեղտոտ էք: Դժբախտացած Մարիամը 15 տարի է որ արդեն չի՛ գալիս Թարիզ, նրանից լուր չկայ, հաւանաբար մահացել է, եւ իր հետ նաեւ փակւել իր կեանքի դժբախտ պատմութիւնը...:

**Տիկ. Նուբարի երկրորդ կեանքը**

Կոտորածից ու ջարդից վերապրած Տիկ. Նուբարը բնութեամբ քաջ կին է եղել: Նա յաղթահարել է զգացական բոլոր դժարութիւնները եւ նոր օջախ կազմել մեծ խանդավառութեամբ: Այնպէս ինչպէս վկայում է իր հարսը՝ Յասմիկ, ո՛չ մի ժամանակ տնում չեն զգացել նրա տառապանքը: Ընդհակառակը, շէնշող ու աշխոյժ բնատրութիւնը շատ է տպաւորել նրանց: Արդէն ի՛նք զաւակների ու թոռների տէր, Յասմիկը այսօրւան նման յիշում է իր հարսանիքի առիթով սկեսրոջ խանդավառ պարը ու ստեղծած ոգեւորութիւնը: Նա շատ էր սիրում լաւ հագնւել ու յարդարւել, ճակատին ոսկեայ գարդակապ գցել, հայկական տարազների բնորոշ ձեռագործ բանաձեւով գլխածածկոյթ օգտագործել ու միշտ ուրախ տրամադրութեամբ լինել:

**Կեանքի վախճանն ու յիշատակը**

Մինչեւ իր կեանքի վախճանը, Նուբարը ապրել է Մառնայում: Նրանց տունը շատ մօտիկ է եղել Մբ. Աստուածածին եկեղեցուն: 1968 թիւն նա կնքել է իր մահկանացուն եւ յաւիտենական հանգիստը գտել Հաֆթուանի հանգստարանում, իր երկրորդ ամուսնու Արշակի շիրիմի կողքին:

Շատ բարի յիշում են Տիկ. Նուբարին, իր հարսն ու թոռնուհին Յասմիկը եւ Արմինէն, որը հազիւ 10 տարեկան աղջնակ էր, մեծ մօր մահուան ժամանակ: «Միշտ իր գրպաններում ընկոյզ ու չամիչ պահում էր, ու մեզ տեսնելիս դրանցով ուրախացնում», յիշում է Արմինէն: «Եղբայրս ամէն Նոր Տարուն Սալմաստից Թարիզ էր բերում նրան, որպէսզի իբրեւ գերդաստանի մեծը, ամանորի մեր սեղանը գլխաւորի», անկացրեց նա: Ջարդի սարսափը ապրած, մահէն կեանքի եկած, կրօնական ու ազգային իր ինքնութիւնը վերագտած Տիկ. Նուբարը, Հայոց Պատմութեան մէկ դժբախտ էջի երջանիկ վերապրողն է, բախտաւորւած իրեն սիրող նոր ամուսինով, զաւակներով ու թոռներով: Վստահաբար հանգի ստ ու անարատ խղճով էլ նա հեռացել է այս աշխարհից, մի նոր կեանքի էջ էլ յաւիտենութեան մէջ բացելով:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ՉԻՖԹՃԵԱՆ

Առաջնորդ Ատրպատականի Հայոց Թեմի  
Իրանահայեր կայք

**Հայաստան**

**Վախճանվել է Սերժ Սարգսյանի հայրը**



16 Դեկտեմբերի 2013 - 11:24

Հայաստանի նախագահի աշխատակազմը խոր ցավով տեղեկացնում է, որ դեկտեմբերի 16-ին, 84 տարեկան հասակում Ստեփանակերտում վախճանվել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հայրը՝ Ազատ Ավետիսի Սարգսյանը:

**Հակառակորդի կրակոցից հայ զինծառայող է զոհվել**



16 Դեկտեմբերի 2013

Դեկտեմբերի 15-ին՝ ժամը 17.00-ի սահմանում, Բերդի տարածաշրջանի Մովսէսի պաշտպանական դիրքերում հակառակորդի կրակոցից զոհվել է Բերդի բնակիչ, պայմանագրային զինծառայող Հրանտ Պողոսյանը: Այս մասին HayNews.am-ի հետ զրույցում հայտնեց ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը:

HayNews.am

## Արագած Ախոյան. Ժամանակը անցել է, որ թակենք սրա-նրա դուռը, այլ կոնկրետ պետք է գնանք կանգնենք մեր պատմական հայրենիքի գլխին



Դեկտեմբեր 14, 2013

Մաքսային միության անդամները լայն հնարավորություններ ունեն արդյունաբերության եւ տնտեսության զարգացման համար, որը կնպաստի երկրի զարգացմանը: Այս մասին այսօր` դեկտեմբերի 14-ին հրավիրված ասուլիսին ասաց ԱԺ ՀՀԿ-ական պատգամավոր Մկրտիչ Մինասյանը:

Նա նաեւ նշեց, որ Մաքսային միության անդամակցությունը նոր ճանապարհներ կգտնի հայ - թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Նրա խոսքով, մեր դիվանագետները, ունենալով ավելի մեծ պետությունների աջակցությունը, կարող են ավելի մեջ չափով մեր երկրի խնդիրները ներկայացնել եւ պահանջատեր դառնալ:

Ասուլիսին հրավիրված ԱԺ ԲՀԿ-ական Արագած Ախոյանն էլ ավելացրեց, որ մեր պետությունը առանց նախապայմանի սահմանի բացման խնդիր է դրել: «Այսօր չճանաչողական լուրջ խնդիր ունենք նաեւ: Սահմանների փակ լինելը նաեւ չի բխում մեր շահերից, որովհետեւ չենք կարողանում ազատ տեղաշարժվել մեր պատմական հայրենիքում: Երկուսից չորս միլիոն ծպտյալ մուսուլմանցած հայություն ունենք, ովքեր մեր գանձն են, ովքեր տարիներ շարունակ հայացքները հառած սպասել են մեզ: Ես ցանկանում եմ, որ Թուրքիան իսկապես դառնա դեմոկրատ երկիր: Բայց այսօր մենք շատ պասիվ ենք, իսկ ինչ արվում է, ընդամենը կոչվում է ժողովրդական դիվանագիտություն»,- նշեց ԱԺ պատգամավորը:

Արագած Ախոյանը նաեւ շնորհակալություն հայտնեց այն մարդկանցից, համասփյուռ հայությանը, որ ցեղասպանության խնդիրը ճանաչելի դարձրեցին ամբողջ աշխարհում Այսօր մարտահրավերների փոփոխություն պետք է լիներ: Այսինքն շեշտը, ոչ թե դնելինք ճանաչման վրա, այլ սլաքը ուղղելինք պատմական հայրենիքին: Ժամանակը անցել է, որ թակենք սրա-նրա դուռը, այլ կոնկրետ գնանք կանգնենք մեր պատմական հայրենիքի գլխին: Ինչը կարող էինք հասնել դատական գործընթացքով»,- ընդգծեց Արագած Ախոյանը եւ ավելացրեց, որ 2014-ն էլ կանցնի, 2016-ն էլ, Ցեղասպանության 100, 110-ամյակն էլ, եթե ձեռքներս ծալած նստենք, ոչ մի արդյունքի էլ չենք հասնի:

NEWS.am

## Թուրքիա մեկնող հայաստանցիների թիվը հոկտեմբերին շեշտակի աճել է




Նոյեմբեր 29, 2013 | 00:04

Թուրքիա մեկնած Հայաստանի քաղաքացիների թիվը 2013 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմել է 61 985 մարդ:

Ինչպես NEWS.am-ը տեղեկանում է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունից, 2013 թվականի հունվար-հոկտեմբերամիսների ընթացքում Թուրքիա մեկնած հայաստանցիների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 4,4 տոկոսով կամ 2613-ով:

Միայն 2013-ի հոկտեմբերին Թուրքիա է այցելել 5808 հայաստանցի, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 8,8 տոկոսով: Նշենք, որ 2012-ի ընթացքում Թուրքիա այցելած հայաստանցիների թիվը կազմել է 70 956:

## Ջայաստանը ռուսական զենք կգնի ներռուսաստանյան գներով



03 Դեկտեմբերի 2013 - 11:12

Հինելով ՀԱՊԿ անդամ՝ Հայաստանը ռուսական զենք կգնի ներռուսաստանյան գներով:

Այս մասին երեկ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ համատեղ ասուլիսում հայտարարել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը:

Պուտինն ասել է. «Ձեռքի գինը ոչ միայն անվտանգության հարց է, այլև՝ տնտեսական, քանի որ կապված է պետական բյուջեի ծախսերի հետ: Գտնվելով Գյումրիում՝ մենք նաեւ հանդիպեցինք ռուսական 102-րդ

ռազմակայանի զինծառայողների հետ: Մենք ելնում ենք նրանից, որ հայկական հողում ռուսական ռազմակայանի առկայությունը նպաստում է Անդրկովկասում կայունության եւ անվտանգության ամրապնդմանը, բարձրացնում Հայաստանի եւ Ռուսաստանի միջև պրակտիկ փոխգործակցության մակարդակը, որպես ՀԱՊԿ անդամներ»:

HayNews.am

### Հայ-իրանական քաղաքական խորհրդակցություններ Թեհրանում



16 Դեկտեմբերի 2013

*Դեկտեմբերի 15-ին Օվկիանիայի և ԱՊՀ հարցերով ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Էրրահիմ Ռահիմփուրի հրավերով Թեհրան այցելեց ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու նպատակով:*

Այցի շրջանակներում նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը հանդիպեց ԻԻՀ ԱԳ նախարար Մոհամմադ Ջավադ Ջարիֆիի հետ: Հանդիպման ընթացքում ԻԻՀ ԱԳ նախարար Ջարիֆը նշեց, որ Իրանի և Հայաստանի միջև առկա են բարիդրացիական հարաբերություններ և փոխշահավետ համագործակցություն, և գոյություն չունի որևէ սահմանափակում տարբեր բնագավառներում այն առավել ընդլայնելու համար:

Խոսելով միջազգային հարթակներում երկկողմ համագործակցությունից՝ նախարար Ջարիֆը բարձր գնահատեց Հայաստանի կառուցողական դերն այդ ոլորտում:

Տարածաշրջանային, մասնավորապես՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման կապակցությամբ, ԻԻՀ ԱԳ նախարարը ընդգծեց հիմնախնդրի խաղաղ և միջազգային իրավունքի նորմերի շրջանակներում կարգավորման անհրաժեշտությունը:

Շավարշ Քոչարյանը փոխանցեց նախարար Ջարիֆին ուղղված ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի ողջույնները:

Նախարարի տեղակալ Ռահիմփուրիի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներին առնչվող երկկողմ համագործակցության շուրջ մի շարք հարցեր:

HayNews.am

### Հայաստանի և Իրանի վիճակագրական մարմինների միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր

06/12/2013 Oratert News Portal



**Վարչապետ Տիգրան Սարգսյանն ընդունել է Իրանի վիճակագրական կենտրոնի տնօրեն Ադել Ազարիի գլխավորած պատվիրակությանը:**

«Ուրախ ենք, որ մեր բարեկամ Իրանի հետ համագործակցություն ենք սկսում նաև վիճակագրության բնագավառում: Համոզված ենք, որ այդ համագործակցությունը բխում է մեր երկու պետությունների շահերից», - ասել է Տիգրան Սարգսյանը: Վարչապետի խոսքով՝ այս բնագավառում կապերի սերտացումն, ընդհանուր առմամբ, կնպաստի նաև երկու երկրների միջև հարաբերությունների ամրապնդմանն ու խորացմանը: Իր հերթին, Ադել Ազարը նշել է, որ Հայաստանի և Իրանի միջև տնտեսական և հումանիտար ոլորտներում հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա և իրենց նպատակն է այդ փոխգործակցությունը ամրապնդել նաև վիճակագրության բնագավառում: Այդ համատեքստում, գրուցակիցները քննարկել են առաջիկայում նախատեսվող ծրագրերն ու նախագծերը: Այնուհետև ՀՀ վարչապետի ներկայությամբ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության և Իրանի վիճակագրական կենտրոնի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որը կնպաստի երկու պետությունների վիճակագրական մարմինների միջև համագործակցության զարգացմանը: Հայկական կողմից հուշագիրը ստորագրել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ստեփան Մնացականյանը, իրանական կողմից՝ Իրանի վիճակագրական կենտրոնի տնօրեն Ադել Ազարը: Հուշագրի ստորագրումը հնարավորություն կընձեռնի համագործակցել վիճակագրության տարբեր ուղղություններով: Մասնավորապես, նախատեսվում է իրականացնել վիճակագրական տեղեկատվության և հրապարակումների փոխանակում և տարածում, փոխադարձ օժանդակության ցուցաբերում մեթոդաբանության ու հեռահաղորդակցման ուղղություններով:



## Հայտնաբերվել է Գեւորգ Չաուշի կնոջ միակ բացառիկ լուսանկարը

**Դեկտեմբեր 15, 2013**

Ներկայում Թուրքիայում գտնվող Այնթափի Նահանգի տներից մեկում հայտնաբերվել է հայդուկապետ Գեւորգ Չաուշի այրու՝ Յեղիսեի (Եղսո) բնօրինակ լուսանկարը:

Ինչպես հայտնում է [horizonweekly.ca](http://horizonweekly.ca) կայքը, Գեւորգ Չաուշի այրու լուսանկարը հայտնաբերվել է 2005 թվականին, Այնթափում տների վերակառուցմամբ զբաղվող վարպետի կողմից:

Իրենից բացիկ ներկայացնող լուսանկարի վրայի հայերեն գրածը չեն հասկացել, եւ երբ Այնթափ են ժամանել հայ ուխտավորներ, ովքեր թարգմանել են բացիկի վրայի գրությունը, որտեղ նշվել է, որ այն հանգուցյալ հերոս Գեւորգ Չաուշի տիկին այրի Յեղիսեն է: Նշված է եղել նաեւ «տիար Յովհաննես եւ տիկին Փիրանեսան, 21 հուլիս, 1910 ՅՅԴ, Այնթափ» գրությունը: Գրության մի մասն անընթեռնելի է եղել:

Նշվում է, որ գտնված բացիկը շարժել է Մուրադի հետաքրքրությունը եւ նա որոշել է ուսումնասիրել Այնթափի պատմությունը եւ հայերեն է սովորել: Այժմ նա աշխատում է 1945-ին, Բոսթոնի «Հայրենիք» տպարանի կողմից տպագրած «Այնթափի գոյամարտը» գրքի թուրքերեն թարգմանության վրա:



## Նարեկ Գալստյանը՝ ՄԴՀԿ նոր ատենապետ



28 Նոյեմբերի 2013 - 18:55

*HayNews.am-ի տեղեկություններով ՄԴՀԿ ատենապետ է ընտրվել ՀՀ վարչապետի օգնական Նարեկ Գալստյանը:* Նույն տեղեկության համաձայն՝ Նարեկ Գալստյանն այսօր ազատվել է ՀՀ վարչապետի օգնականի լիազորություններից: Մեզ չհաջողվեց տեղեկատվությունը ճշտելու համար կապ հաստատել վերջինիս հետ, սակայն վաղը ժամը 12-ին HayNews մամուլի ակումբում սպասվում է ՄԴՀԿ վարչության նորընտիր ատենապետի ասուլիսը:

HayNews.am

## Պարույր Հայրիկյանը մասո՞ն



«Միացյալ երիտասարդական լիգայի» անդամ Սևակ Հովհաննիսյանն այսօր Ազատության հրապարակում Մաքսային միությանը միանալու ՀՀ որոշման դեմ իր հերթական ակցիան անցկացնող ԱԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանից փորձում էր ճշտել, թե արդյոք վերջինս մասո՞ն է, թե ոչ: Պարույր Հայրիկյանի հարցին ի պատասխան՝ ասաց. «Աշխարհում այնքան բամբասանքներ ու հիմարություններ կան, որ դրանց անդրադառնալն

անգամ ծիծաղելի է: Դուք գիտե՞ք որևէ մեկին, ով իր կյանքի հիմնական մասը տվել է Հայաստանի անկախության գաղափարին: Եթե գիտեք այդպիսի մասունի, ապա կարող էք այդպիսի հարց տալ: Նշենք, որ Մևակ Հովհաննիսյանը հավաստիացնում էր, որ 32 աստիճանի մասուն Հայկ Հակոբյանը, ով փորձել է իրեն կաշառք առաջարկել, պնդել է, որ Պարույր Հայրիկյանը նա մասուն է: Նա նաև նշեց, որ իրենց կազմակերպությունը պայքարում է կրոնական կազմակերպություններում տիրող անօրինությունների դեմ.« Այդ կազմակերպությունները մարդկանց խաբեությամբ թալանում են կամ հոգեկան խանգարումների են հասցնում, մենք փորձելու ենք այդ ամենը բացահայտել և օրենքի ուժով պատժել: Հունվարից կատեղծենք կենտրոն, որտեղ կլինեն մասնագետներ սկսած հոգեբաններից մինչև իրավաբաններ, ովքեր օրենքի սահմաններում ամեն ինչ կանեն»: Մևակ Հովհաննիսյանի խոսքով՝ «Միացյալ երիտասարդական լիգան» ֆինանսավորվելու է բարերարների կողմից: HayNews.am

### Huffington Post-ը Վարդավառը ներառել է աշխարհի ջրային տոների լավագույն 8-յակում



27 Նոյեմբերի 2013

Ամերիկյան Huffington Post-ը ներկայացրել է աշխարհի ջրային տոների լավագույն 8-յակը, որում ընդգրկվել է նաև Վարդավառը: Կայքը հայկական տոնի մասին գրում է. «Վարդավառը նշվում է Հայաստանում և ունի քրիստոնեական և հեթանոսական արմատներ: Ավանդույթի համաձայն, հեթանոսական Աստղիկ աստվածուհին տարածել է սեր և վարդաջուր, իսկ Վահագնը պաշտպանել է մարդկանց: Վարդավառի ժամանակ հայերը դուրս են գալիս փողոցներ և ջուր լցնում միմյանց վրա: Տոնի մեջ է մտնում նաև աղավնի բաց թողնելը»:

HayNews.am

### Արցախ

### Ռուս քաղաքագետ. Ղարաբաղյան խնդիրը կարող էր լուծվել ապագա Եվրասիական միության շրջանակներում



Դեկտեմբեր 06, 2013

Եթե Ադրբեջանն անդամակցի Մաքսային միությանը, դա կնշանակի, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև բոլոր խոչընդոտները պեք է վերանան: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտարարել է ռուս քաղաքագետ Միխայիլ Ալեքսանդրովը՝ անդրադառնալով ՌԴ Պետդոմայի ԱՊՀ, Եվրասիական ինտեգրացման ու հայրենակիցների հետ կապի հարցերով կոմիտեի նախագահ Լեոնիդ Սլուցկու հայտարարությանն այն մասին, որ Ռուսաստանը հույս ունի Ադրբեջանը կանդամակցի Մաքսային միությանը:

«Բավական հետաքրքիր կլինի տեսնել, թե ինչպես է Ադրբեջանը, որը Հայաստանի նկատմամբ շրջափակում է իրականացնում, վերացնում Հայաստանի հետ մաքսային խոչընդոտները: Եթե Ադրբեջանը նույնիսկ տեսականորեն մտադիր է անդամակցել ՄՄ-ին, ապա ինչպես է պատրաստվում լուծել այդ հարցը»,- նշել է Ալեքսանդրովը՝ կարծիք հայտնելով, որ Ադրբեջանը հիմար քաղաքականություն է վարում. ինքն է իրեն սահմանազատել Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից. փոխարենը վերջ տա բախմանը, շրջափակմանը ու սկսի Ղարաբաղի հետ հումանիտար հարաբերություններ զարգացնել, լավ պայմաններ ստեղծել Ղարաբաղ վերադարձող փախստականների գոնե մի մասին համար, Ադրբեջանը պաշտպանում է հակամարտության գիծի, ինչի հետևանքով խնդիրը չի լուծվում: Այս պահին, նրա համոզմամբ, զուտ փիլիսոփայական է, բայց եթե դիտարկենք գործնական տեսանկյունից, պարզ չէ, թե ինչպես կարող է Ադրբեջանը անդամակցել Մաքսային միությանը, եթե հաջորդ տարի գարնանն արդեն ՄՄ անդամ կլինի Հայաստանը: «Իսկ քանի որ ՄՄ անդամությունը հարցերը լուծվում են կոնսենսուսի պայմաններում, Հայաստանը բնականաբար չի ջնջակցի նման առաջարկն այնքան ժամանակ, քանի դեռ Ադրբեջանը չի դադարեցնի թշնամական

գործողություններն իր դեմ: Կարծում եմ, որ Ադրբեջանը, հասկանալով իրավիճակը, չի ձգտում անդամակցել ՄՄ-ին, քանի դեռ չեն հասել դարաբաղյան հակամարտության որևէ լուծման», - նշել է Միխայիլ Ալեքսանդրովը:

Քաղաքագետ նաեկարծիք է հայտնել, որ եթե ստեղծվի Եվրասիական միություն, սկզբունքորեն դարաբաղյան հակամարտությունը կարող էր լուծվել այդ կառույցի շրջանակներում: « Այն ժամանակ եւ Լեռնային Ղարաբաղը, եւ Ադրբեջանը, եւ Հայաստանը կարող էին դառնալ այդ միության անդամ, եւ բոլոր խոչընդոտները կվերանային: Միակ բանը, որ Ադրբեջանը չէր ունենա, դա հնարավորությունն էր վերահսկել իշխանությունը Լեռնային Ղարաբաղի տարածքում, այդպես ապրանքների, անձանց , ծառայությունների եւ կապիտալի շարժը տեղի կունենար, եւ, ի վերջո է, ոչ մի խոչընդոտ չէր լինի եչ ադրբեջանցիների եւ ոչ էլ հայերի համար», - հայտարարել է Միխայիլ Ալեքսանդրովը բացատրելով, որ հայերը կարող էին այդ դեպքում վերադառնալ Ադրբեջանի տարածք, որտեղից նրանց վտարել էին, իսկ ադրբեջանցիները կարող էին վերադառնալ Լեռնային Ղարաբաղի տարածք: «Ըս էության արցախցիներն իրենց երկրում իրենք կկառավարեն, նրանք Խորհրդային միությունում էլ էին իրենք կառավարում, իհարկե, Ադրբեջանն այն ժամանակ վերահսկում էր, իսկ այժմ չի վերահսկի: Սակայն սա թվում է իդեալական ու ֆանտաստիկ տարբերակ, որը մոտ ժամանակներում չի իրականացվի», - եզրափակել է քաղաքագետը:

**Արեւմտյան Վայաստան**

**Թուրքիայում գանձ գտնելու համար եկեղեցու հիմքերը քանդողը սրտի կաթված է ստացել**



**Նոյեմբեր 23, 2013**

Թուրքիայի Տրապիզոն նահանգի Չամբա գյուղում գտնվող պատմական եկեղեցում ոսկի գտնելու հույսով 2 արկածախնդիր եղբայրներ հսկայական թունել են փորել,

սակայն եկեղեցու ներս մտնելու պահին հանդիպել են իրենց սպասող ժանդարմերիային:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Ալի եւ Մեհմեդ եղբայրները Տրապիզոնի Չամբա գյուղի պատմական եկեղեցում ոսկի գտնելու հույսով մոտ 50 մետր թունել են փորել, որի հողը հեռացնելու համար նույնիսի երկաթգիծ են ամրացրել եւ լույս քաշել:

Նրանց ծրագրերի մասին տեղեկացել է շրջանի ժանդարմերիան եւ եղբայրներին սպասել եկեղեցու ներսում: Այն պահին, երբ եղբայրները արդեն թունելից դուրս են եկել եկեղեցու ներսի տարածք՝ իրենց դիմաց տեսել են ժանդարմերիայի ծառայողներին եւ շոկի մեջ ընկել: Եղբայրներից մեկը տեղում սրտի կաթված է ստացել եւ արագ տեղափոխվել հիվանդանոց:

Մյուս եղբորը ձեռքակալել են եւ տեղափոխել դատարան, որտեղից նա ստորագրությամբ ազատ է արձակվել: Մինչ դատարանի որոշումը եղբայրներին արդեն տուգանել են անօրինական հոսանք («լեւի լույս»-խմբ) օգտագործելու համար 6000 լիրայով:

**Թուրքիայում հայկական դպրոցները պահանջում են ավարտական քննությունները դարձնել հայերեն**



**Նոյեմբեր 25, 2013**

Թուրքիայում հայկական եւ հունական դպրոցների ղեկավարները դիմել են Թուրքիայի ազգային կրթության նախարարություն՝ պահանջելով դպրոցական ավարտական քննությունները դարձնել մայրենիով:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի հայկական եւ հունական դպրոցների ղեկավարները պահանջել են 6 առարկայից հանձնվող ընդհանուր քննությունները իրենց շրջանավարտների համար դարձնել մայրենիով: Այդ քննությունները հանձնում են, երբ տեղափոխվում են այլ ուսումնական հաստատություններ:

Թուրքիայի ազգային կրթության նախարարությունից տեղեկացրել են, որ նախարարը եթե դրական պատասխան տա, այդ ամենը կկիրառվի հաջորդ տարվանից:

Ստամբուլի ազգային փոքրամասնությունների 22 դպրոցներում սովորում են մոտ 3 հազար հայ եւ 350 հույն երեխաներ:

## Հայաստանից բռնագավթած աղի հանքերը թուրքերը օգտագործելու են բժշկական տուրիզմի համար



Դեկտեմբեր 13, 2013

Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող պատմական հայկական Կողբի աղի հանքերը թուրքերը ցանկանում են օգտագործել շրջանում բժշկական տուրիզմը զարգացնելու համար:

Թուրքական Bursadabugun կայքի փոխանցմամբ՝ Իգդիրի մշակույթի եւ տուրիզմի վարչության պետ Օսման Էնգինդենիզը հայտարարել է, թե Իգդիրից 40 կմ հեռավորության վրա գտնվող Թուզուջայի (Կողբ-խմբ) 840 մլն տոննա աղի պաշար ունեցող հանքերը նախատեսում են օգտագործել նաեւ շրջանում բժշկական տուրիզմը զարգացնելու համար:

Նա նշել է, թե հայ-թուրքական սահմանին գտնվող աղի հանքը 400 տարի կրավարարի Թուրքիայի ներքին պահանջը, սակայն իրենք ցանկանում են նաեւ, որ այն օգտագործվի նաեւ բժշկական տուրիզմը զարգացնելու նպատակով: «Աղի հանքի քարանձավների օդը շատ օգտակար է մի շարք հիվանդությունների բուժման համար: Բուժման համար ժամանող զբոսաշրջիկներին կծանոթացնենք շրջանի հետ», -ասել է Օսման Էնգինդենիզը: Նշենք, որ Կողբի աղի հանքերը մինչև 1920 թվականը պատկանել են Հայաստանին, սակայն 1921 թվականի տխրահռչակ Կարսի պայմանագրով դրանք բռնակցվել են Թուրքիային:

### Տեղասպանությունը ճանաչող թուրք պատգամավորը Ստամբուլի քաղաքապետի թեկնածու է առաջադրվել



Դեկտեմբեր 04, 2013

Թուրքիայում նոր կազմավորված Ժողովուրդների դեմոկրատակ կուսակցության փոխնախագահ Էրթուրուլ Բյուրքչուն հայտարարել է, թե Ստամբուլի քաղաքապետի իրենց թեկնածուն Սըրըր Սուրեյա Օնդերն է:


Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Ժողովուրդների դեմոկրատակ կուսակցության գլխավոր գրասենյակում 2014 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ կապված տեղեկություններ հաղորդող կուսակցության փոխնախագահ Էրթուրուլ Բյուրքչուն հայտարարել է, թե իրենց եւ իհարկե ժողովրդի թեկնածուն է Սըրըր Սուրեյա Օնդերը: Նա նշել է, թե Թուրքիայի բոլոր քաղաքներում աշխատելու են թեկնածուներ առաջադրել եւ պայքարի մեջ մտնել 2014-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում:

Նշենք, որ նորաստեղծ HDP-ի խորհրդի կազմի մեջ են ընդգրկվել հայ համայնքից Ստամբուլի Յեշիլբոյի հայկական դպրոցի տնօրեն Գարո Պայյանը, դիարբեքիրցի հայտնի հայ գրող Մկրտիչ Մարկոսյանը:

Հիշեցնենք, որ Սըրըր Սուրեյա Օնդերը 2012-ի ապրիլի 24-ին, Թուրքիայի խորհրդարանում հայտարարել է, թե 1915-ին հայերի մեծ կոտորած է տեղի ունեցել, որը աշխարհի բոլոր լեզուներով էլ ցեղասպանություն է կոչվում:

## Սիջագային

### «Նրանք չունեն ոչ մի սրբություն և մարդկայնություն» բացառիկ հարցազրույց Սիրիայի հայկական ինքնապաշտպանական ջոկատի զինվորի հետ



17 Դեկտեմբերի 2013 - 11:59

Media Group Fedayi - MGFedayi.info-ն ներկայացնում է բացառիկ հարցազրույց Սիրիայի հայկական ինքնապաշտպանական ջոկատի զինվորի հետ:

Անվտանգության նկատառումով փոխված են զինվորի անուն, ազգանունը:

- Պատմեք հակիրճ Ձեր մասին, Ձեր արմատների մասին:
- Ես ծնվել ու մեծացել եմ Դամասկոսում, հաճախել եմ Սուրբ Սարգիս եղեկեցուն կից հայկական դպրոցը: Իմ նախնիները Կիլիկիայից են, տեղափոխվել են Սիրիա, երբ 1920թ. Ֆրանսիան հանձնեց Կիլիկիան թուրքերին: Իմ մեծ պապը /պապիկիս հայրը/ և իր եղբայրները նահանջել են, պայքարելով, սակայն եղբայրներից մեկը զոհվել է: Արդյունքում բնակություն են հաստատել Դամասկոսում: Մենք հիշում ենք ամեն ինչ, Կիլիկիան մեր սրտերում է այնպես, ինչպես և հիշողությունը մեր նախնիների մասին:

– Ինչպիսի՞ն է իրավիճակը Սիրիայում և մասնավորապես հայ համայնքինը:

– Պատերազմի առաջին իսկ օրերից դրությունը մնում է լարված, ռազմական գործողությունները ընթանում են տարբեր ուղղություններով: Սակայն կարևոր է, որ բանակը ճնշում է ահաբեկիչներին, որոնք մեկ-մեկ անցնում են հակահարձակման, բայց հիմնականում խուսափում են անմիջական բախումներից, դիմում են ահաբեկչության և խաղաղ բնակիչներին վախեցնելուն: Նրանք կազմակերպում են պայթույթներ, քաղաքի տարբեր հատվածների գնդակոծումներ, առևանգումներ, սակայն Սիրիայի քաղաքացիները հավատքով են լցված հանդեպ իրենց բանակը, որը ամեն օր քայլեր է կատարում դեպի հաղթանակը:

Հայկական համայնքը, ինչպես և Սիրիայի բոլոր քաղաքացիները առաքինությամբ են կրում պատերազմական շրջանի բոլոր դժվարությունները Աստծո և խաղաղ երկնքի հավատքով: Հայ ժողովուրդը վերապրել է շատ արհավիրքներ, կվերապրի և սա:

– Ե՞րբ եք անդամակցել հայկական աշխարհագորի շարքերը: – Ռազմական գործողությունների ամենակարգից մեր թաղի հայերը, ես և ընկերներս կազմավորեցինք ինքնապաշտպանական ջոկատ, որը ապահովում էր մեր թաղամասի պաշտպանությունը: Հայկական ինքնապաշտպանական ջոկատները գործում են հիմնականում հայերի ապրելավայրերում, ապահովելով խաղաղ բնակիչների պաշտպանությունը անկախ ազգային հավատքի պատկանելիությունից: Մեր ջոկատների մարտիկներից շատերը ընդունվել են կառավարական զորքերի:

– Մարտական հերթապահությունների ժամանակ ընդհատվել էք այսպես կոչված «ընդհմության» հետ: Ովքեր են այդ մարդիկ և ինչպիսի՞ ուժեր են սատարում դրանց:

– Դրանց շարքերում կան մոլորյալներ, որոնց ստիպել են գեներ վերցնել և գնալ եղբայրապահ պատերազմի, սակայն դրանց մեծամասնությունը վարձկաններ են, կողոպտիչներ և ահաբեկիչներ: Նրանք չունեն ոչ մի սրբություն և մարդկայնություն, նրանք ավերում են քրիստոնեական և մահմեդական սրբավայրերը, սպանում են երեխաներին և կանանց: Մենք բոլոր ջանքերը պետք է դնենք, որպեսզի մաքրենք Սիրիան այդ աղտից: Մենք տիրապետում ենք ստույգ տվյալներով, որ տարբեր խմբավորումները, մասնավորապես ծայրահող իսլամական /վահաբիտներ/ հսկվում և ղեկավարվում են թուրքական ծառայությունների, Մաուդյան Արավիայի հետախուզության, ՆԱՏՕ-ի զինվորական մասնագետների /ԱՖրիկա, Անգոլա և այլ/ կողմից: Այդ խմբավորումների ֆինանսավորումը իրականացվում է վերը նշված ուղղություններից:

Ցանկանում ենք սևեռել Ձեր ուշադրությունը այն հանգամանքի վրա, որ թուրքական ծառայությունները հատուկ ծրագրեր ունեն ընդդեմ Սիրիայի հայերի: Մասնավորապես իրենք մեծ գումարներ են վճարում հայ խաղաղ բնակիչների սպանության համար, հայկական թաղամասերի գնդակոծման, ահաբեկչության համար, հայկական եկեղեցիների ավերման համար: Թուրքիան մշտական ձգտել է թուլացնել, ցրել Մերձակա Արևելքի հայկական համայնքները: Սակայն, կարող ենք վստահորեն ասել, որ դա իրենց երբեք չի հաջողվի:

## 1915-ի տեղահանությունն անմարդկային էր և սխալ. Դավութօղլու



13 Դեկտեմբերի 2013

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Սևծովյան տնտեսական համագործակցության (ՄՕՏՀ) անդամ երկրների արտգործնախարարների խորհրդին մասնակցելու համար Երևան այցելելուց հետո ուշագրավ հայտարարություններ է արել թուրք լրագրողների հետ զրույցում՝ Հայոց ցեղասպանությունը որակելով որպես «անմարդկային տեղահանություն»:

Թուրքական հեղինակավոր «Հյուրիյեթ» պարբերականի թղթակիցը, ով ներկա է եղել Դավութօղլուի գրույցին, փոխանցել է նրա արտահայտած մտքերը: Անդրադառնալով Հայոց ցեղասպանության հարցին՝ Դավութօղլուն այն կոչել է «1915 թվականի դեպքեր» և դրանք «սխալ ու անմարդկային» որակել:

«Ասում ենք «արդար հիշողություն», որը նշանակում է, որ մենք պետք է տիրապետենք փաստերին: Այդ պահին էլ կտեսնենք, որ հայ-թուրքական հարաբերությունները, ասենք, նման չեն գերմանացիների և հերաների հարաբերություններին: Ամեն փողոցում մենք մի ընդհանուր հետք ունենք: Տեղահանության ժամանակ կատարվածը ամբողջովին սխալ մի քայլ է համարում: «Իթթիհաթ վե Թերաքի» կուսակցության կատարածը ես սխալ ու անմարդկային եմ համարում»,-նշել է Դավութօղլուն: Թուրքիայի արտգործնախարարն անդրադարձել է նաև հայ-թուրքական հարաբերություններին՝ նշելով, թե իրենց հիմնական նպատակը լոկ սահմանը բացելը չէ, այլ Կովկասում խաղաղության ու կայության հաստատման համար պայմանների ստեղծումը: Նա հավելել է ,թե այս ամենի համար երեք «ոտք» է պահանջվում:

Առաջին «ոտքը» Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերություններն են: «Մենք Բաշար Ասադի հետ բարեկամ էինք, սակայն այժմ չեն կարող Դամասկոս այցելել, ինչպես այցելեցի Երևան: Այսօր նույնիսկ բարևելն է բարդ»,-նման օրինակ է բերել Դավութօղլուն:

Երկրորդ «ոտքը» Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերություններն են, որը, ըստ թուրք նախարարի, կարելի է անգամ «տարածաշրջանում էթնիկ խաղաղության հաստատում կոչել»: «Անգամ Վրաստանի ու Աբխազիայի հարաբերություններն այստեղ կապ ունեն», -շեշտել է թուրք նախարար Դավութօղլուն:

Եվ երրորդ «ոտքը», ըստ Դավութօղլուի, անմիջապես հայ և թուրք ժողովուրդների միջև հարաբերություններն են, այսինքն՝ Լուս Անցելեսում, Փարիզում, Մոսկվայում, որտեղ էլ որ լինի հայերի ու թուրքերի միջև առկա խնդիրները

լուծումը:

«Երեք ուրբերից մեկը եթե վնասվի, խնդիրներ կառաջանան: Օրինակ, եթե սահմանը բացեցինք, վաղը եթե Ադրբեջանի և Հայաստանի միջև պատերազմ սկսվի, ստիպված ենք լինելու կրկին փակել այն»,-հավելել է Դավութջյունը: Հավելենք, որ 2015 թվականին ընդառաջ, երբ լրանալու է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, Թուրքիան ակտիվացրել է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման թեման: Այս կերպ Անկարան փորձելու է ցույց տալ միջազգային հանրությանը, թե քայլեր է ձեռնարկում հայերի հետ հարաբերությունները բարելավելու ուղղությամբ, իսկ Ցեղասպանության ճանաչումը կարող է միայն այդ գործընթացին խանգարել: Այսպիսով, թուրքական կողմը փորձելու է մեղմել 2015 թվականի ազդեցությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ակտիվացման վրա:

HayNews.am

### Թուրքիան ականազերծելու է Ջայաստանի հետ սահմանը



Նոյեմբեր 29, 2013

Թուրքիայի ներքին գործերի նախարար Մուսաբեր Գյուլերը հայտարարել է, թե առաջիկայում Եվրամիության հետ համաձայնեցված մի ծրագրի ֆինանսավորմամբ ականազերծվելու են Հայաստանի եւ իրանի հետ սահմանները:

Թուրքական Anadolu գործակալության փոխանցմամբ՝ Թուրքիայի ՆԳ նախարար Մուսաբեր Գյուլերը նշել է, թե սահմանների անվանգության ապահովման հարցում նոր տեխնոլոգիաներ են կիրառելու՝ շեշտելով, թե Հայաստանի եւ Իրանի հետ սահմանամերձ 15 մլն 975 հազար քմ տարածքում ականազերծման աշխատանքներ են իրականացվելու:

Թուրք նախարարը հայտնել է, թե այդ սահմանների հսկողության վերազինման եւ ականազերծման աշխատանքների ընդհանուր բյուջեն կազմում է 105 մլն 950 հազար ԱՄՆ դոլար:

Անդրադառնալով սահմանների հսկողության համար նոր տեխնոլոգիաներին, Մուսաբեր Գյուլերը հիշատակել է ջերմային ու ինֆրակարմիր տեսախցիկները:

### Իրաքյան հեռուստաընկերությունը Թուրքիայի արեւելքը որպես Քուրդիստան է ներկայացնում



Դեկտեմբեր 14, 2013

Հյուսիսային Իրաքի Քուրդիստանի ինքնավար հատվածից եթեր հեռարձակվող Rudaw TV-ն եղանակի տեսության մեջ օգտագործում է այնպիսի քարտեզ, որում Թուրքիայի արեւելյան նահանգները որպես Քուրդիստան են ներկայացվում:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Հյուսիսային Իրաքի Քուրդիստանի առաջնորդ Մեսութ Բարզանիի իշխանությունների ազդեցության տակ գտնվող Rudaw TV-ի հեռարձակվող եղանակի տեսություններում ներկայացվող քարտեզում Թուրքիայի Էրզրում, Միվաս, Ադրը, Վան, Մալաթիա, Հաթայ, Մերսին նահանգները ներառված են Քուրդիստանի սահմանների մեջ:

Նշվում նաեւ, որ Հյուսիսային Իրաքի «Քուրդիստանի ժողովրդավարական» (KDP) կուսակցության ֆեյսբուքյան էջում Բարզանիի Թուրքիա կատարած այցի ժամանակ տեսագրություն էր տեղադրվել, որի մեջ Թուրքիայի գրեթե ամբողջ արեւելքը ներկայացվել էր որպես Քուրդիստան:

### Ջրապարակվել է թուրքական բանակի անձնակազմի թիվը

03 Դեկտեմբերի 2013

Թուրքական բանակի թվաքանակն աճ է գրանցել, ինչը կապված է զորակոչի և զորացրման ժամկետների հետ, փոխանցում են թուրքական լրատվամիջոցները:

Դեկտեմբերի սկզբի դրությամբ Թուրքիայի զինված ուժերի անձնակազմը 708.054 մարդ է: Այս ցուցանիշը նախորդ ամսվա համեմատ աճել է շուրջ 60 հազարով: Նոյեմբերի դրությամբ Թուրքիայի բանակը կազմված էր 647.969 հոգուց:

Հիմնական աճը գրանցվել է շարքային կազմում, ինչն էլ կապված զորակոչի և զորացրման ժամկետների հետ: Նշենք նաև, որ 708.054 անձնակազմից զինծառայողները 655.952-ն են, իսկ քաղաքացիական անձինք՝ 52.102-ը:

HayNews.am

## 1917-ին ինչ են խոսել Աթաթուրքը և Ստրասբուրգի նահանգապետը ցեղասպանության մասին



Դեկտեմբեր 17, 2013

Թուրքիայում կան թեմաներ, որոնց մասին չբարձրաձայնելու մասին չգրված օրենքներ կան: Այդ արգելված թեմաներից է Հայոց ցեղասպանության մասին իրողությունները:

Արգելված թեմաների շարքից այս անգամ NEWS.am-ը ներկայացնում է Հայոց ցեղասպանությունը ուսումնասիրող թուրք պատմաբան Սեիթ Չեթինօղլուի «Մուսթաֆա Քեմալին և Հայկական հարցին ուղղված համեստ լրացում» հրապարակումը քրդական Gelawej կայքում:

Չեթինօղլուն իր հրապարակման սկզբում նշում է, որ Մուսթաֆա Քեմալը իթթիհադական (երիտթուրքական-խմբ) ավանդույթներով զինված քաղաքական գործիչ էր: Չեթինօղլուն Քեմալի կերպարի ուսումնասիրման համար մեջբերում է Կլաուս Կրեյսերի «Աթաթուրքի կենսագրությունը» գրքում ներկայացված փաստեր:

«1917-ին Մուսթաֆա Քեմալը սուլթան Վահդեթթիինի հետ օտարերկրյա գործուղումներին մեկնում էր որպես հատուկ սուրհանդակ: Այստեղ ներկայացնեմ Կրեյսերի հիշատակումը, որտեղ Աթաթուրքի խոսքերը բավական պարզ են: Վահդեթթիինի հետ գործուղման մեկնած Մուսթաֆա Քեմալը գերմանացի նահանգապետի հետ ճաշի ժամանակ կրկինեց Իթթիհադ վե Թերաքիի՝ (Երիտթուրքերի կուսակցությունը-խմբ) հայերի վերաբերյալ խոսքերը: Խոսակցությունը շարունակեց Ստրասբուրգի այն ժամանակվա նահանգապետ Նիկոլաուս վոն Դավլիցը:

Մուսթաֆա Քեմալը արդեն 1926-ին այդ խոսակցությունը հետեյալ կերպ է պատմում. «Գերմանացի նահանգապետը համարձակվեց ինձ ասել, որ հայերը լավ մարդիկ են, իսկ թուրքերը նրանց դեմ հարձակումներ են գործել և վատ վերաբերվել: Ես շատ զարմացա, քանի որ նա հզոր նահանգապետ էր, ևս հյուր էի եւ ի վերջո, մենք դաշնակիցներ էինք:

Ես նրան հարցրեցի, թե նա ինչո՞ւ է հայերի օգտին նման բան ասում, երբ հայերին որպես ազգ ներկայացնել

փորձող և նրանց գոյությունը սպառնացել ցանկացողները դրանով աշխարհին խաբում են ու Թուրքիային վնաս հասցնում:

Ես ինձ չկարողացա զսպել և շարունակեցի՝ ասելով, թե շատ տարօրինակ է, որ մենք այդքան զոհեր ենք տվել, իսկ նա մտածում է, թե Թուրքիայի հողերում հայ ազգ կարող է լինել: Այդ ժամանակ Դավլիցը պնդեց, թե նա այդ ամենը լսել է և իր սեփական կարծիքը չէ: Ես նրան ասացի, որ եկել եմ իմանամ գերմանական բանակի վիճակի մասին, ոչ թե հայկական հարցը քննարկեմ», - ասել է Մուսթաֆա Քեմալը:

Մուսթաֆա Քեմալը արդեն 1926-ին, երբ սրա մասին հայտարարեց, կարող էր մի քանի բան չբարձրաձայնել, սակայն նա չարեց:

Մուսթաֆա Քեմալի տեսակետը շատ սարսափելի է: Այսինքն, հայերը երկար տարիներ ոչինչ չանելով՝ կորցրել են ազգ կոչվելու իրավունքը», - գրել է Սեիթ Չեթինօղլուն:

## Նելսոն Մանդելան երկրային կյանքին հրաժեշտ տվեց

06/12/2013 Oratert News Portal



S

Երկարատև ծանր հիվանդությունից հետո երեկ ուշ երեկոյան 94 տարեկան հասակում կյանքից հեռացել է Նելսոն Մանդելան Հարավ Աֆրիկյան Հանրապետության առաջին սևամորթ նախագահը, մարդու իրավունքների ամենահայտնի ակտիվիստներից մեկը:

## Պետությունը Դինքի սպանության կազմակերպիչներին աշխատավարձ է տալիս. Էրիան Թուլնջել

Դեկտեմբեր 03, 2013

Թուրքիայում վճռաբեկի կողմից Յրանտ Դինքի սպանության գործով վճռի բեկանումից հետո հերթական դատավարության ժամանակ նախկին դատավարության ժամանակ որպես սպանության ուղղորդող անցնող Էրիան Թուլնջելը սկանդալային հայտարարություն է արել:

Թուրքական Radikal-ի փոխանցմամբ՝ դատարանում Երհան Թունջելն իր պաշտպանական ճառում հայտարարել է, թե ինքը ոչ թե կասկածյալ է, այլ վկա՝ պնդելով, թե ինքը սպանության կազմակերպման մասին լուրը հայտնել է, սակայն միջոցներ չեն ձեռնարկվել այն կանխելու համար: Թունջելը պնդել է, թե ինքն սպանության հետ կապ չունի, իրեն որպես փոխարինող են օգտագործել: «Յրանտ Դինքի սպանության հետ պետությունը կամ Գյուլենի կրոնական համայնքը կապ չունեն: Սպանությունն իրականացվել է «Էրզենեկոնից» ավելի բարձր կազմակերպության կողմից: Պետությունն այդ կազմակերպության անդամների անխտավարձ է տալիս:



Վճռաբեկի որոշումը, թե կա «հանցավոր կազմակերպություն» ճիշտ է, սակայն կիսատ: Քանի որ այդ կազմակերպությունը միայն Օգյուն Սամաթից եւ Յասին Յայալից կազմված չէ», -ասել է Երհան Թունջելը: Նշենք, որ Թուրքիայում վճռաբեկի կողմից Յրանտ Դինքի սպանության գործով վճռի բեկանումից հետո սեպտեմբերի 17-ին Ստամբուլի ծանր հանցագործությունների գործերով 14-րդ դատարանում վերսկսված դատավարության ժամանակ որոշում է կայացվել ձերբակալել սպանության ուղղորդողներից Երհան Թունջելին, ով ազատ էր արձակվել Դինքի գործով վճռի հրապարակումից հետո: Այս տարվա մայիսին Յրանտ Դինքի սպանության գործով դատավճիռը վճռաբեկ 9-րդ դատարանում բեկանվելուց հետո ուղարկվել է Ստամբուլի ծանր հանցագործությունների գործերով 14-րդ դատարան:

### Անկարան դժգոհ է դարաբաղյան հարցի շուրջ ԵԱՀԿ ՄԻՒ-ի գործունեությունից



#### Դեկտեմբեր 05, 2013

Թուրքիան ողջունում է վերջերս Վիեննայում Յայաստանի ու Ադրբեջանների նախագահների միջև կայացած հանդիպումը: Այդ մասին ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի նիստի ժամանակ հայտարարել է

կազմակերպությունում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ Թաջան Իլդեմը:

Իր խոսքում Թուրքիայի ներկայացուցիչը նշել է, որ սառեցված կոնֆլիկտների կարգավորումը պետք է առաջնահերթ լինի: Նրա խոսքով՝ Յարաձային Կովկասում առկա կոնֆլիկտները թույլ չեն տալիս լիարժեք օգտվել համագործակցության ներուժից, ազդում են տարածաշրջանի բարեկեցության վրա:

Թաջան Իլդեմն ընդգծել է, որ Թուրքիան աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերի դարաբաղյան հարցի կարգավորման շուրջ՝ հավելելով, որ «ցավոք, ջանքերը նկատելի արդյունքի չեն հանգեցրել»:

Նա նաեւ նշել է, որ Անկարան Ղարաբաղում ստատուս քվոյի պահպանումն անընդունելի է համարում:

NEWS.am

### Թուրք կոչվող ցեղ չկա, այն սինթետիկ է. Էրդողանի կուլսակից



#### Դեկտեմբեր 04, 2013

Թուրքիայի իշխող «Արդարություն եւ զարգացում» (AKP) կուսակցության ղեկավար խորհրդի անդամ, պրոֆ. Յասին Աքթայը հայտարարել է, թե թուրք կոչվող ցեղ չկա, այն սինթետիկ է:

Թուրքական Bugun պարբերականի փոխանցմամբ՝ Բայբուրթի համալսարանում կազմակերպված գիտական կոնֆերանսի ժամանակ Արդարություն եւ զարգացում» (AKP) կուսակցության ղեկավար խորհրդի անդամ, պրոֆ. Յասին Աքթայը, մի ուսանողի՝ «սոցիալական պետություն լինելու համար երկրում մեծամասնություն կազմող ազգի ազգայնականությունը ոտքերի տակ առնելը ձեր կարծիքով ճիշտ է» հարցին ի պատասխան, ասել է. «Եթե այս երկրում միայն թուրքերի հետեւից գնաս, դրա արժեքը շատ բարձր կլինի: Թուրքիան կհանգեցնի պառակտման:

Քեզ ասել են, որ դու թուրք ես: Իսկ ի՞նչ է նշանակում թուրքականություն: Միջին Ասայից եք եկել: Նայիր, մեր քանիսի՞ պապն է Միջին Ասիայից եկել: Յարցրու խնդրում եմ: Ի՞նչ է թուրքը: Քո ասած թուրքը սինթետիկ է: Թուրք անունով ցեղ չկա», -ասել է Յասին Աքթայը:

Էրդողանի կուսակցի այս խոսքերը Թուրքիայում մեծ արձագանք են գտել:



## Թուրք կուսակցապետը Էրդողանին հիշեցրել է Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ իրենց հանդիպման մասին



Նոյեմբեր 28, 2013

Թուրքական «Ազգայնական շարժում» կուսակցության (MHP) փոխնախագահ, Անկարայից ընտրված պատգամավոր Թուրքուլ Թյուրքեշը պատասխանել է վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ իրենց կուսակցության լեզենդար առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի եւ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի միջեւ տարիներ առաջ տեղի ունեցած հանդիպման հետ կապված հայտարարությանը:

Թուրքական EtikHaber կայքի փոխանցմամբ Թուրքուլ Թյուրքեշը, պատասխանելով իշխող կուսակցության կողմից իրենց հանգուցյալ առաջնորդի եւ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի միջեւ հանդիպումների թեմային, ասել է, թե ժամանակին իրենք հանդիպել են Հայաստանի նախագահի հետ հանուն իրենց ազգակիցների շահերի:

«Հանգուցյալ Թյուրքեշը պարոն Տեր-Պետրոսյանի հետ հանդիպում էր որպես թուրքական աշխարհի առաջնորդ, եւ աշխատում էր վերջ դնել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ թշնամությունը:

Մենք այն ժամանակ Հայաստանի նախագահի հետ հանդիպեցինք 3-րդ երկրում՝ Ֆրանսիայում, իսկ Էրդողանը Բարզանիին Դիարբեքիքում դիմավորեց ինչպես պետության ղեկավարի, հաշվի չառնելով, որ Բարզանին այժմ ունի մեր այդ հողի վրա: Եթե մենք պարոն Լեւոն Տեր-Պետրոսյանին դիմավորեինք Արարատ լեռան մոտ, այդ դեպքում մենք առիթ չէին ունենա այսօրվա իշխանություններին քննադատելու:

Մենք պարոն Տեր-Պետրոսյանի հետ հանդիպմանը չենք հրավիրել համերգ տալու թուրքերի թշնամի Շառլ Ազնավուրին, իսկ Էրդողանը դա Շիվան Փերվերի (Թուրքիան համարում է ահաբեկիչ երկիր-խմբ) միջոցով արեց:

Մենք դեռ 1993-ին Հայաստանի նախագահի հետ հանդիպմանը աշխատում էինք 2015-ի դեմ միջոցներ ձեռնարկել, իսկ Էրդողանը Բարզանիի հետ հանդիպմանը 2014-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար իր կուսակցության համար ներդրում արեց: Ես խորհուրդ եմ

տալիս իշխող կուսակցության անդամներին, որ Թյուրքեշի անունը տալուց, 20, Եթե պետք է 100 անգամ մտածել»,-ասել է Թուրքուլ Թյուրքեշը:

Նշենք, որ Էրդողանը մշտապես իր դեմ ազգայնականների մեղադրանքներին ի պատասխան հիշեցնում է, թե ժամանակին նրանց առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշը հանդիպումներ է ունեցել Հայաստանի այն ժամանակվա նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ:

## Օջալանի հրահանգով դադարեցվել է Թուրքիայից PKK-ի զինյալների դուրս բերումը. Milliyet



Դեկտեմբեր 16, 2013

Թուրքիայի Իմրալը կղզու բանտում ցմահ բանտարկության ենթարկված PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանի հրահանգով է դադարեցվել քուրդ զինյալների դուրս բերումը Թուրքիայի սահմաններից:

Ինչպես գրել է թուրքական Milliyet-ը, 2013-ի մայիսից սկսված քուրդ զինյալների դուրս բերումը Թուրքիայի սահմաններից դադարեցվել էր շատ կարճ ժամանակ անց, եւ թուրքական անվտանգության ուժերի պատասխանատուները երկար ժամանակ չէին հասկանում թե ում հրահանգով է այն դադարեցվել: Նշվում է, որ թեեւ Թուրքիայի ներքակադաքական կյանքում մի շարք այլ իրադարձություններ տեղի ունեցան, ավտանգության ուժերի ներկայացուցիչները ուշադիր հետեւել են քրդական հարցի հետ կապված զարգացումներին եւ եկել եզրակացության, որ քուրդ զինյալների դուրսբերումը դադարեցնելու հրահանգ տվել է հենց Աբդուլլահ Օջալանը: Այս փաստը բացատրվում է թուրքական իշխանությունների կողմից քրդական հարցի կարգավորման ուղղությամբ կոնկրետ քայլերից հրաժարվելու հետեւանքով:

Նշենք, որ 2013-ի մարտի 21-ին, Դիարբեքիքում Նովրուզի տոնակատարության ժամանակ կարդացվել էր Իմրալը կղզու բանտում ցմահ ազատագրվման դատապարտված PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանի ուղերձը:

Օջալանի ուղերձում PKK-ին կոչ էր արվել վայր դնել զենքերը, քանի որ եկել է խաղաղության ժամանակաշրջանը:

Մշակույթ

Արաք



Միրդատ Մարտիրոսյան

Արաք (5)



Պետրոսեան Վահէ, Աշխարհաբնակ Աստղագետ դոքտ. Ծնել է 1938 Թւի, Սեպտ-13-ին Արաք քաղաքում: Նախնական ուսումը նաև միջնակարգ բնագիտական ճիւղում աւարտել է իր ծննդավայրում, ապա երկրորդ անգամ

Միջնակարգ Դպրոցի թւաբանական ճիւղը Թեհրանում: Այնուհետ ընդունւելով «Թեհրան» համալսարանը Ճարտարագիտութեան ճիւղում և վեց ամիս սովորելուց յետոյ յառաջադէմ աշակերտի հանգամանքով մեկնել է Ամերիկա որտեղ լրացրել է Քորնել համալսարանի Ճարտարագիտութեան ճիւղը:

Իր գիտական հետաքրքրութիւնները ձևաորում է աստրո-Ֆիզիքայի մէջ և աշխատելով աստղագիտութեաներիտասարդ տարիքից: Աշխատակցել է Ալիք օրաթերթին Հայրենիք, Նաւասարդ, Լոյս, Արմենուիի, Լուսաբեր և Բագին ամսագրերին: Գրել է բանաստեղծութիւններ, Պօէմներ, Քառեակներ և քերթւածներ: Իր Հարսի Կոնդ պօժման արժանացել է Գևորգ Մելիտինեցի գրական մրցանակին, որը համահայկական առժէք է ներկայեացնում:

Ճարտարագիտական ինստիտուտի կողմից հրաւիրւել է կատարելու տիեզերական հետազոտութիւններ, աստղերի, ծիրկաթինների,Գլակտիկաների,գազային միգամասծութիւնների և այլ երևոյթների վերաբերեալ:

Տարիներ է ինչ Ստանֆորդ համալսարանում վարում է աստղագիտութեան Պրոֆեսորի պաշտօն, միաժամանակ հետազոտութիւններ է կատարում նոր ծանօթութիւնների հորիզոն բացելու գիտական աշխարհի մէջ:

Աստղագիտութեան մասին ունի արժեքաւոր աշխատութիւններ: մինչ այժմ յատուկ հրաւերով մասնակցել է տասնեակ համաշխային Աստղագիտական համագումարների Եւրոպայում, Ամերիկայում, Ռուսաստանում և Հայաստանում:

3000 Աստղագետներից կազմւած 17-րդ համագումարում, որը տեղի է ունեցել Մոնրէալում, մասնակցող հայերից

մէկը հանդիսացել է Վահէն : (տես Ալիք թիւ 197-1979 թիւ Սեպ. 17):

Կազմել է «աստղագիտութեան դասաւանդման արդի մեթոդներ գիրքը», որպէսզի ուսանողների համար մատչելի լինի գիտական մարզի դասերը:

Աշխարհաբնակ Վիքտոր համբարձումեանի հրաւերով այցելել է Հայաստանի «Բիւրեկանի» Աստղադիտարան որը աշխարհի երրորդ աստղադիտարանն է համաեւում աշխարհում:

Հարագատ մօտիկութիւն է ունեցել Վիքտոր Համբարձումեանի և միւս հայ աստղագետների Էդւարդ Խաչիկեանի, Հրանդ Թովմասեանի և ուրիշների հետ որոնք պատիւ են բերում հայ ազգին:

Նա մի հայրենասէր անձնաւորութիւն է , աստղագիտութեան ճամբի վրայ իրեն համարելով հայ ազգի մի զինուոր հայ դատի ճանապարհին:

Փոխադրած Խորդադ -Թիր օրացոյց Թիւ 1979 Թեհրան:




Յովասափեան Անդրանիկ Պրոֆ Դոք,- 1936-2010. Ծնել է Արաք քաղաքում: Նախական և միջնակարգ կրթութիւնը ստացել է իր ծննդավայրում: Աւարտել է Շիրազի համասարանի բժշկութեան Ֆակուլտետը: Աշխատանքի է անցել Շիրազի Նմազի հիւանդանոցում:

Անցել է Փէնսուլանիա անցկացնելու իր փորձառութեան շրջանը: 1968 թականին վերադարձել է Իրան դասաւանդելով նոյն համալսարանում, որտեղ ուսանել է որպէս Անաստղեգիայի դասախօս: 1974 թականին փոխադրւել է Շիրազօ աշխատելով տարբեր հիվանդանոցներում:

Դքտ. Յովասափեանը ստեղծել է վիրաբուժութեան ընթացքում հիւանդի շնչառութիւնը ապահովելու համար սարքաւորումների մի մասը: Նրա շնորհիւ անեստիզեաի մէջ գտնուող հիւանդների շնչափողում խողովակի տեղադրումը դարձել է օգտագործելի, երբ սովորական միջոցներ կիրառելի չէր լինում: Նրա շնորհիվ առողջապահական ծառայութիւնները բարելավել է միլիոնաւոր մարդկանց համար:

Շիրազօի համալսարանի դասախօս, անեստեզիոլիզ «բիհուշիի մասնագետ» իրանահայ Դքտ. Անդրանիկ Յովասափեանը մահացել է կաթւածի հետևանքով Հիլսինգիում անաստեզիոլզների համաժողովին մասնակցելիս:



Յովասափեան Շաւարշ Ծնել է 1938 թականին Արաք քաղաքում. Տարական և միջնակարգ ուսումը ստացել է ծննդավայրում:

Զինուորութեան ծառայութիւնից յետոյ 1960-63 դասաւանդել ն է Թեհրանի Նայիրի և

Թունեան դպրոցներում , ապա մեկնել Գերմանիա: Աւարտելով Գերմանիաի Եուհաննէս-Գուլթենբերգ համալսարանի ատամնաբուժական Ֆաքուլտետը ստանալով դոքտորա տիտղոս: 1974 թ. Ամուսնանում է որ. Մարիաննէ Թուլնի հետ բախտաւորելով երկու զաւակներով: Մայնց քաղաքում հիմնադրելով Հայ ուսանողական միութիւն ղեկավարելով Մեծ Եղեռնի 50 ամեա յիշատակին նւիրած յուշատօնին: Հիմնադիր և անդամ է Ֆրանկֆորդ քաղաքի Հ.Հ.Մշակուշային միութեան: Մասնակցելով Գ.Հայոց Կենդ.Խորհուրդի վարչութեան անդամ ապա 1999 -ից ընտրելով նոյն կազմակերպութեան նախագահ: 1989 թւականից որպէս Գ.Հ.Բժիշկների միութեան անդամ մարդասիրական օգնութիւն նաև բժշկական պիտոյքների հայթայթում Հայաստանին և Արցախին: Անդամ է Գերման-Հայաստան հիմնադրամի նաև ՀՕՄ-Գերմանեոյ հիմնադրամի: 2003 թ Ամենայն Հայոց Տ.Տ.Գարեգին 2-կոնդակով Պարգևատրել է Սև Ներսէս Շնորհալի շքանշանով: Նաև 2006.Թ Հայաստանի ազդային գրատարանի կողմից արժանացել գնահատական Յակոբ Մեղապատի մեդալով:



Յովասափեան Աբրահամ Ծնել է 1921 թւականին Արաքի Բորվարի գաւառ Խորզէնդ գիւղում: Նախնական ուսումը ստանում է իր գիւղի դպրոցում, ապա շարունակում Արաքի հայոց դպրոցում, իսկ միջնակարգ ուսումը Համադանի Միսիոնների դպրոցում: Պաշտոնավարել է Արաքի հայոց դպրոցում որտեղ ընտրւում է հայ մշակութային միութեան նախագահ: պաշտօնավարել է նոյնպէս Տերանի Մեսրոբեան Գոհար դպրոցում: Ընտանիքով տեղափոխւելով Թեհրան: Ապրահամը լինելով դաւանանքով աւետարանական, սակայն նա միշտ եղել է մեր ազգային դրացքին առաջնորդաին հաւատարիմ: Ունի բազմաթիւ պատմաբանասիրական և կրօնական ուսումնասիրութիւններ :



Յովսէփեան Հայկը 1909-1981- Ծնել է իրանի Բորվարի գաւառի Սանգսֆիդ գիւղում: Նախնական կրթութիւնը ստանում է իր ծննդավայրում ապա Արաք քաղաքում: Տարականը աւարտելով արձանագրւում է Զուղայի քանանեան միջնական դպրոց: Նա զբաղւել է նաև ուսչութեամբ որպէս հայոց լեզվի գրականագետ դասատու, դասաւանդելով Թեհրանի ազգային դպրոցում:

Գրել սկսել է շատ երիտասարդ տարիքից:



Յովսէփեան Էդիկ 1928-2011.- Ծնել է Արաք քաղաքում: Նախնական կրթութիւնը ստացել է Արաքի հայոց ազգային դպրոցում: Փոքր տարիքից նա ընտրել է ջութակը, որպէս իր նախասիրած երաժիստական գործիք, պատանի տարիքից արդէն նւագել է սիմֆոնիք նւագախմբերի մէջ: 19 տարեկանից արդէն նա բազմաթիւ երգչախմբեր է ղեկաւարել, պարսկաստանի տարբեր բնագաւառներում, արժանանալով Հայ և թէ պասիկ բարձրաստիճան անձնորոշիւների կողմից: Նւագել է պետ Մամֆոնիք երգչախմբի, ռադիօ օպերաբալէթի և պետական նւագախմբի առաջին վիոլոնը: 1980 թւականին ընտանեոք հաստատւում են Տրնտօ, Քանադա: Հաստատւելուն պէս անմիջապէս գործի է անցնում իր շուրջ հաւաքելով երիտասարդ կարող երգիչ երկչուիներին կազմելով ներկաեանալիք մի երգչ բնագաւառում ստանալով Դոքտորայի տիտղոս: Քալիֆորնիա Անանի Իրանահայ երաժիշտութեան ուսուցիչ Էդիկ Յովսէփեանը եղել է Գողթան երգչախմբի հիմնադիր ղեկաւար և միւթենական մշակութային գործիչ:




Տէր. Պետրոսեան Յովհաննէս 1912-2007. Ծնել է Արաքի Բուրւարի գաւառի Սանգսֆիդ գիւղում, հինգ Տարեկան է լինում որ տեղափոխւում են նոյն գաւառի Նասրաբաղ նորակերտ գիւղը: Նախնական կրթութիւնը ստացել է իր քահանայ հօր շնչի տակ, ապա ընդունւում է Արաքի հայոց ազգային դպրոցը: Նախնականը աւարտելով երկու տարի յաճախել է Սամսամի պետական միջնակարգ դպրոցը: Սկսեալ 1935 թվականին 42 տարի ուսուցիչ, շրջանային տեսուչ և ներքին տեսչի պաշտօններով վարել է Քամարա, Բուրվարի գավառների ապա Թեհրանի «Արովեան», «Նայիրի», «Մահակեան), և «Արաքս» դպրոցներում : Նա իր բոլորանէր մասնակցութիւնն է բերել նաև գաւառի նաև թեհրանահայ համայնքի ազգային. Հասարակական զանազան աշխատանքներին :-1938 թւականից իր մասնակցութիւն է բերել Արաքի շրջանի հայաբնակ գաւառների դպրոցական ցանց ծաւալելու նպատակով կեանքի կոչւած Մուլթանաբաղի ուսումնասիրաց միութեան, և այս առիթով շրջելով Բուրւարի գաւառի 22 հայաբնակ գիւղեր կազմելով ժամանակացոյց միաժամանակ հաւաքելով և գրի առնելով գաւառի ժողովրդական երգերն ու կենցաղի սովորութիւնները: Դպրոցական աշխատանքներին զուկնթացք աշխատակցել է Ալիք օրաթերթին նաև «Քուլիս», «Մփիւռք», պարբերականերին:

Եղել է Ալիք օրաթերթի 50- ամեակի կազմակերպիչ յանձնախմբի անդամ,և կազմել է Իրանահայ կրթական կեանքի անդրադարձը «Ալիք»-ի էջերում խորագրով տեղագրություն, որը տպագրել է Ալիքի 50 ամեակի առթիւ լոյս տեսած գրքում:

Մի քանի շրջան անդամակցել է Թեհրանի հայոց թեմի Դատական Խորհրդի և Ս. Սարգիս եկեղեցու խորհրդին:

Մասնակցել է «Տարերք քերականութեան» գրքուկի կազմելու աշխատանքին, անդամակցել է Թեհրանի հայոց Թեմի նաև Ս. Սարգիս եկեղեցու դատական խորհուրդի անդամ: 1999 թականին հիմնադրում է առաջին գունավոր պատկերազարդ Կանթեղ Օրացոյց, ապա հանձնելով Ալիք օրաթերթի ապահով ձեռքերի :

Կազմել է Պասկերէնից Հայերէն բառարան շուրջ 60000 բառ պարունակութեամբ:



Վրէժ Տէր Պետրոսեանը ծնւել է Իրան Արաք քաղաքի բուրւարի շրջանի Նասրաբաղ գիւղում: Նախնական կրթութիւնը մինչ 10-րդ դասարանը ուսանել է Արաք քաղաքի հայոց ազգային Շարաֆ դպրոցում, ապա միջնակարգը Թեհրանի Դանէշ-Սրահը – Մողաղէմաթի, որպէս

մարզական ուսուցիչ:

Շուրջ 30 տարի դասաւանդել է որպէս ուսուցիչ վերակացու Սահակեան, Ռոստոմ, Գուլբէնգեան, Արարատ ազգային դպրոցներում և Անիսթիդէու Մարիամ դպրոցում: Ապա մասնակցելով իրանի խմբապետական դասընթացներին, սկաուտական նախագահ Դքտր. Բընաի-ից առժանալով գեր խմբապետ, նաև գերագանց գնահատանքների բարձրագոյն շքանշան:

Վրէժը 7 հոգու հետ միասին մասնակցել է Իրանի առաջին Սկ.Խմբապետական դասընթացներին, նշանակւելով Արամ Աբովեան դպրոցում որպէս Սկաուտական Վարիչ:

Վրէժը նաև մասնակցելով Իրանի Սկ. խմբապետների գիտելիքների քննութիւններին, Արարատ, Գուլբէնգեան, Ռոստոմ Ալիշան և միւս դպրոցների մէջ հանդիսանալով Առաջին: Նաև «Խմբապետների դասարան» արժանանալով Սկաուտական WOOD BADGE շքանշան:

Նա նոյնպէս արժանացել է 2,3,4 փայտէ նշանների որը համաշխարային սկաուտական գիտելիքների ամեաբաժը սկաուտական գնահատական նշան է :

Նա Մեսրոբ Մաշտոց Մատենադարանին է նւիրել «Մաշտոց» հին ձեռագիր գիրքը նաև 6 եկեղեցական տպագիր շարականեր և եկեղացական աղօթագրեր,

նաև պարսկահայ աշուղների «դաֆթառ» գրւածքները:



Չոն Թերման համշ.կազմակերպ. Նախագահը գնահատելիս:

Ս Արևշատեան Մատեն. Տնօրէն Նվիրում Ս.Մեսրոբի շքանշան: Թանգարանի տնօրէն: Գալեա Առոստոմյան Ազատամարտ.



ԼՈՒԿ ՍԻՄՈՆՅԱՆ

Տարական և միջնակարգ ուսումը ստացել է տեղի պետական դպրոցում: Լինելով Արաքի պատենա-երասարդական միութեան գործոն անդամ, մասնակցել է թե միութեան և թե դպրոցի թատերական, գրական ու գեղարվեստական աշխատանքներին նաև եղել է Արաքի երկչախմբի անդամ:

Փոխադրելով Թեհրան երկար տարիներ մասնակցել է «Կոմիտաս»երգչախմբին, ղեկավարությամբ Պրն Համբարձում Գրիգորեանի: Թեհրանում երեք տարի պաշտոնավարել է «Շահագիզ» և «Նայիրի» դպրոցներում:

Ստացել է հաշիչ մեքենաների ծրագրավորման մասնագիտություն որ և նոյն հաստատության մեջ ծրագրավորել ու դասաւանդել:

Երկու տարի սովորել է Թեհրանի» ազատ համալսարանի նկարչության ճիւղում:

Մասնակցել է ազգային դպրոցների հոգաբարձական և ծնողական խոհուրդների աշխատանքներին: Եղել է Հայ Կին միութեան նախագահուհի:

Աշխատել է մանկապատենական «Լուսաբեր » ամսագրին և «Ալիք» օրաթերթին:

Ունի անտիպ բանաստեղծությունների գրքոյկ:

է յայտնի ֆիլմարւեստի ռեժիսոր Բահրամ Բէյգաի հետ և առժամանակ ախշխատելով նրա հետ արձանագրում է դրամատիկ գեղարվեստի համալսարան:

Կիսատ թողնելով համալսարանը աշխատում է կարճ «Ֆախթէ» Վայրի Աղավնի ֆիլմը Ապա «Մքանդար» ֆիլմը: Քանի անգամներ անյաջող փորձեր կատարելով

Վերջապէս յաջողում է առաջին կինօթատրոնի Վերջին Վարագոյր «Փարդէ Ախար» ֆիլմը պատրաստել: Այս ֆիլմը գերազանց յաջողութեամբ շահում է ինը յաղթանակ Սիմորդ Բոլուրին յայտնի մրցանակը: Բայց ցաւոք սրտի յետոյ մինչ օրս չի յաջողել նա նորից որևէ ֆիլմ պատրաստել: նրա գործնական աշխատանքը սինեմայի բնագաւառում սկսել է հանրահայտ Բահրամ Բէյգաի աջակցութեամբ:

Վերոյիշեալ գրւացքի նիւթերը օգտւել եմ Արմենակ Պետրոսեանի Յուշեր գրքից, Աբրահամ Յովասափեանի «Արմենակ Մաքսապետեան » գրքից , մասամբ Ալիք օրաթերթերից և նաև Նայիրի Ա և Բ տարեգրքերից և Իմ անձնական յուշերից:

Միհրդատ Մարտիրոսեան  
Շաբ. 5 և Վերջ

**Սոհեր**

**Սեր Անցած Ճամփան**

Թ. Ղարախանյան Սիրակցի

Վարդանի Էդվարդ Դէքտ. Ծնել է 1928 թականին Արաք Քաղաքում: Բժշկութեան մասնագիտություն նաև



Վիրահատության դոքտորայի մասնագիտությունը ստացել է Թեհրանի Դանէշգահ Փեզէշկից ապա Գերվիրահատության մասնագիտությունը մարտդական համալսարանից վերաբերեալ Փարիսի բժշկական համալսարանից:

Դքտ. Էդվարդ Վարդանին իր սեփական աշխատանքներին զուգընթաց որպէս վիրահատության մասնագետ դասաւանդում է Թեհրանի բժշկական գիտությունների ֆաքուլտետում: Նա ունի նաև բժշկական տարբեր հոդւածների հրատարակություններ :



Քարիմ մապիհի Վարուժ Ծնել է 1952 Թականին Արաք քաղաքում: Իր միջնակարգ ուսումը աւարտելով անցնում է գերմանիա բժշկություն սովորելու նպատակով. սակայն Մունիխի հայկական ակումբում հանդիպելով մի հայ սինեմա թադրոնի ռեժիսորի փոխուում է իր կեանքի ուղին: Վերադառնալով Թեհրան հանդիպում

Մինչեվ 1968 թ վ ա կ ա ն ը , Ս ի Ր ա ք գյուղը դատարկվեց հայերից եւ իրենց տեղը լցւ եցին պարսիկ հողագործ ընտանիքներ...

կիսակտուր “pick-up” մեքենա վարձեցի հեծանիվս դնելով մեքենայի գլուխը եւ մեծ պապ- մամիս հետ ճամբա ընկանք դէպի իմ ծառայության վայր Աղբուլաղ գյուղ: Անցանք գյուղերից մտանք Հաջիաբաղ քալանթար Մինաս Մինասյանի տան բակը, քալանթար Մինասը այդ երկու օրը մըսել էր եւ խոսք տվեց “հալս լավնա մե ջուռ գուքամ”: Բարի առողջություն ցանկացանք եւ մեկնեցինք դէպի Մամուքա, այնտեղից վերցրինք Քալանթար Սկրտում Մանսուրյանին եւ մի երկու ժամ անց արդեն Աղբուլաղ էինք: Մինչեւ բացման օրը դպրոցի դասարաններից մեկում հանգիստ տեղ էինք պատրաստել, որ մտանք հանգստվեցինք: Դպրոցի բացման օրվա համար էլ գյուղապետը մի օրվա համար սենյակ պատրաստեց տեղաշարժերը փոխադրելու եւ հանգստանալու հատկապէս մեծ մասն պիտի կանանց հետ մնար մինչեվ բացումի գնացողները գնային: Աղբուլաղ գյուղի պարսիկ ընտանիքներ քանի օր հարգանք ու պատիվ մատուցեցին մեծ պապ ու մամիս եվ Սկրտում քեռուն (Եղիսաբեթ մեծ մասն մամուքա էր ծնվել եւ իր ասությանը մօրաքրոջ թոռներ էին Սկրտում քեռու հետ):

Դպրոցի բացման օրը հասավ: Հողոտ ու փոշոտ դպրոցի ճանապարհի երկու կողմը շիտակ ու կանգուն այդ տարվա զարման ամսին տնկած

փոքրահասակ կանաչ ու դեղին տերեվներով ծառներ էին եւ թվում էր ճանապարհի երկու կողմին կանգնած զինվոր պահակներ էին, ճանապարհի երկու կողքին նոր ջուր տված՝ առվակներից թարմացնում էին ճանապարհի չոր ու փոշոտ շունչը:

Ճանապարհի սկզբում, երկու կողմ փայտե սյուներ դնելով կամար կապեցինք, դրոշակներով եվ գույնզգույն շորերի կտորներով զարդարեցինք, գյուղի տղամարդիք լցվեցին կամարի շուրջ, առաջի շարքում գյուղի ալեվորների եվ մամուռան գյուղից եկած ռազմընկերս Ալի Իրանփուռի հետ դիրք բռնեցինք. Նաև նախորոք հրավերքս ստացած ներկա էին դպրոցի կառույցող երկու վարպետներն եւ քալանթարներ՝ Թաթևոս մեծ պապս, Սկրտում քեռին, Մամուռանի գյուղապետ եւ մեր գյուղապետին խնդրեցի կանգնել հենց դպրոցի երկաթեա դռան առջեվ, եւ մեծ մասն Աղբուլաղ գյուղի գյուղապետի կնոջ հետ հեռվում գյուղի դալի հետեի կտուրները կանգնեցին դիտելու որ տիկնայք միայն հեռվից տեսնեն ինչ է կատարվում:

Մագանդար ու դհոյուն կարկադրեցի սպասեն մինչեւ իրենց նշան անեն: Արդեն կեսօրվա մոտ էր որ զինվորական ջիփերով հարգանքի նշանով լույսերը վառած պաշտոնեա հյուրերը հանդարտ մոտեցան եւ կանգնեցին քիչ հեռու կապած կամարի առաջ եւ իջեցին քայլելով դեպի դրոշակները որտեղ եւ էլ ողջույնիս գրածքը ձախ ձեռքում զինվորական բարեվելով աջ ջեռքս բարձրացնելով քանի քայլ առաջ անցա եւ ձախ ձեռքում բռնած իմ ողջույնիս գրվածքը կարդացի, սկսելով մեծն թագավորի անունից. սպիտակ հեղափոխության կետերը կարդալով վերջում բարձրաձայն բղավեցի “ապրած կենա մեծն Թագավորը եւ իր հայրենասեր նպատակները որ Պարսկաստանի ժողովրդին հասցնելու է բարձր քաղաքակրթության դարպասների առջեվ”...այստեղ մեջ բերում արեցի Թագավորի ճառերից մեկում մի փոքր նախադասության, որն ասում է. «Այդ ինչ պարծանք կլինի որ ես գլխիս Թագավորական Թագ դնեմ երբ իմ ժողովուրդը եւ երկիրը դեռ չքավոր է ու տկար... Երբ Սպիտակ հեղափոխության նպատակները իրականացավ, հողագործի վիճակը բարելավեց եւ երկիր հայրենին ոտքի կանգնեց եվ բարգավաճեց, այդ ժամանակ Թագավորական Թագ դնելու մասին կմտածեմ...» եւ շարունակեցի... ասելով՝ որ հենց այս նորակառույց դպրոցը որ կառուցվել է աղյուսից, երկաթեա դռներով եւ ցիմենթեա հատակով ու լուսավոր դասարաններով եւ որը կրթում ու դաստիարակում է այս մատաղ սերնդին, հենց արդյունքն է մեր մեծ Թագավորի հայրենասեր ռազմավորության: Ողջույնիս խոսքը վերջացրի, ձեռքս ցածացրի եւ հուռա գոռացի. ինձ հետեւելով գյուղի Գոռան կարդացողը սուրբ ԳՈՌԱՄՆ գիրքը պահելով դրոշակի կամարների գլխին օդի մեջ պտտացնում էր եվ օրհնում Գորան սուրբ գրքով... լավեցին հյուրերի ծափերը, նշան արեցի գունայ դիղին, սագը սկսեց ուրախության եւ հրճվանքի եղանակները, քայլեցի դեպի պաշտոնյաններ ամենի ձեռքերը սեղմելով, նմանապես իմ զինակից զինծառայող Մամուռան գյուղից ինձ հետեվեց... եվ բոլորս գունայի քայլերով մոտեցանք կանաչ գույնի լենթերով կամարների որտեղ մի աշակերտ բացումի մկրատը դրած պտտնոցի վրա սպասում էր հանձնելու Ուսման Չորքի Կրթական տնօրենին լենթը կտրելու եւ երբ լենթը կտրվեց ծափերի ձայնը շարունակեց եւ նորակառույց դպրոցի լայն ճանապարհով մոտեցանք դպրոցի մուտքին, Չինվորական ջիփերը հարգանքի նշանով նորեն վառեցին լույսերը եւ դափ ու գունդան մեղեդին փոխեցին փչելով պարային եղանակ:



Վանիկ Բաղդասարյան

**Թամար Փանոսյան  
Շայերեն-պարսկերեն առածանի**

زبانزدهای ارمنی-فارسی  
تالیف تمار پانوسیان

106- Գլուխը սաղ լինի, գլխարկ շատ կը ճարվի:

سر که باشد کلاه بسیار است.



107- Է՞ծը իրա ոտից կախ կտան, ոչխարը իրա:

هر بزی را بیای خود می آویزند.



108- Որ գեղն էրթաս, էն տեղի գդակը դիր:

خواهی نشوی رسوا هم رنگ جماعت شو

109- Խոսքը մեկ, աստված մեկ:

حرف مرد یکی است.



110- Մեկը հագարի անունն է կտարել:

یک بز گر گله را گر گین کند.

## اتحادیه اروپا یکی از مهم ترین همکاران ارمنستان



اتحادیه اروپا یکی از مهم ترین همکاران ارمنستان می باشد.

با بیان این مطلب آقای "آرتاک زاکاریان" رئیس کمیته دائمی مجلس ملی ارمنستان در امور روابط خارجی طی نشست روسای کمیته های روابط خارجی پارلمان های ملی کشورهای عضو اتحادیه اروپا تاکید داشته است که انجام اصلاحات در زمینه های حقوق بشر و گسترش ارزش های دموکراتیک در ارمنستان محور اصلی همکاری های ارمنستان و اتحادیه اروپا می باشند. ارمنستان درصدد رشد و توسعه روابط و همکاری های خود با اتحادیه اروپا می باشد. دولت ارمنستان اطلاعات بسیار مهمی را برای اولویت قانون، مدیریت ثمربخش، تقویت حقوق بشر و گسترش ارزش های دموکراتیک کرده است.

پژوهش است. ویژگی شاخص اثر، تازگی موضوع پژوهش است. نویسنده کتاب معتقد است سیر تکاملی مشابهی در دو کشور ایران و ارمنستان وجود دارد. همگونی روایات مربوط به افسانه ها و اسطوره های دو کشور در "اشتراکات اساطیری و باورها در منابع ایرانی و ارمنی" بررسی شده است. کتاب با برابر کردن نام ها، اسطوره ها و جشن های باستانی در دو کشور بسیاری از آن ها را از یک ریشه مشترک می داند. در آغاز کتاب جدول حروف الفبای ارمنی همراه با معادل لاتینی آن ها، نقشه ارمنستان و "روش پژوهش" نیز منتشر شده است. همچنین در کتاب تصاویر سیاه قلمی از اسطوره ها به چشم می خورد. برخی بخش های کتاب عبارتند از، "جغرافیای ارمنستان"، "تاریخ، نام و خاستگاه قوم ارمنی"، "توتیمیزم، اسطوره های طبیعت یا طبیعت پرستی"، "آئیمیزم یا پرستش روح"، "اسطوره شناسی"، "مقدمه اساطیر"، "سندارامت دنیای زیرین، دنیای زیرزمینی"، "جشن ها"، "ادبیات" و "پیشینیان و پادشاهی که به صورت اسطوره در آمده اند" نام دارند. در این بخش ها موضوعاتی همچون "آل"، "شاهپت"، "نار" و اسطوره هایی چون "آرامزد"، "آناهید"، "واهاگن"، "میهر"، "آستیک"، "نیر، تیور"، "نانه" و "بارشامین" مورد بررسی قرار گرفته است.

"ماریا آیوآزیان" در سال ۱۳۲۳ در تهران متولد شده است. ایشان دوره لیسانس را در رشته ادبیات فارسی در دانشگاه تهران، دوره فوق لیسانس را در رشته زبان و ادبیات ارمنی (از گروه زبانهای باستانی) در دانشگاه تهران به پایان برد.

## تشکیل دولت انتقالی توسط کردهای سوریه

برحسب آراکس نیوز 20/11/2013



در پی مذاکرات صورت گرفته در شهر کردنشین "قامیشلی" ترکیه، کردهای سوریه که حدود ده درصد جمعیت این کشور را تشکیل می دهند و عمدتاً در منطقه شمال شرقی سوریه سکونت دارند، اعلام نموده اند که دولت موقت انتقالی تشکیل می دهند. به نظر کارشناسان، این امر باعث نگرانی ترکیه گردیده است، چراکه می تواند باعث تحریک کردهای ترکیه در راستای کسب خودمختاری گردد.

## دیدار نخست وزیر جمهوری قره باغ با مقامات آلمان

آراکس نیوز 20/11/2013



به گزارش نشریه "بیورشدتر تسایتونگ" آلمان، "ماتیاس ویلکس"، مسئول بخش "برگ اشتراسه" از منطقه "هسن" این کشور در دفتر خود با "آراییک هاروتیونیان"، نخست وزیر جمهوری آرتساخ (قره باغ) و هیات همراه وی دیدار و درباره روابط دوجانبه گفتگو کرده است. سفر نخست وزیر جمهوری قره باغ به آلمان در پاسخ به سفر مسئول آلمانی به قره باغ برگزار شده است.

## افتتاح بنای یادبود نسل کشی ارمنیان در کانادا

آراکس نیوز 03/11/2013



در مراسم افتتاح این بنا در مرکز شهر "لاوال" واقع در ایالت "کبک"، مقامات کانادایی سیاست انکار نسل کشی مذکور از سوی دولت کنونی ترکیه را محکوم کرده اند.

## انتشار کتابی با موضوع اشتراکات اساطیری ایرانی و ارمنی



کتابی تازه با گردآوری، ترجمه و تدوین "ماریا آیوآزیان" (ترزیان) با عنوان "اشتراکات و باورها در منابع اساطیری ایرانی و ارمنی" و با همکاری "آنوشیک ملکی بخشمندی" در ۲۸۲ صفحه، شمارگان ۵۰۰ نسخه و قیمت ۱۰ هزار تومان از سوی پژوهشگاه علوم انسانی و مطالعات فرهنگی منتشر گردید.


هدف کلی نویسنده، تحلیل تطبیقی و مقایسه ای بین باورهای ایرانی و ارمنی و یافتن اشتراکات میان ادبیات اساطیری ایران و ارمنستان است. اسطوره های طبیعت مانند: خورشید، آب، آتش، زمان، پرستش روح، اسطوره شناسی، جشن ها، روایات تاریخی و اسطوره های جنگ های میان ایران و ارمنستان، از جمله محورهای اصلی

## روزنامه نگار ترک تبار ترکیه: "آیا ترکیه رهبری خواهد داشت که ننگ انکار نسل کشی ارمنیان را از پیشانی ملت ترک بردارد؟"

آراکس نیوز 10/12/2013

"اورهان کمال چنگیز" در مقاله منتشره در نشریه "رادیکال" ترکیه یادآور شده است که "ویلی برانت"، نخست وزیر وقت آلمان، در سال ۱۹۷۰ میلادی در سفر به لهستان در محل بنای یادبود قربانیان جنایات حکومت آلمان در جنگ جهانی دوم زانو زد و نسبت به قربانیان جنایات مذکور ادای احترام کرد. "چنگیز" در ادامه مقاله خود اظهار امیدواری نموده است که ترکیه نیز دارای رهبری خواهد بود که اقدام مشابهی در قبال قربانیان نسل کشی ارمنیان توسط ترکیه به عمل آورد. این روزنامه نگار ترک تبار ترکیه همچنین یادآور شده است که با وجود آنکه "رجب طیب اردوغان"، نخست وزیر ترکیه، در سال ۲۰۰۹ میلادی اظهار داشته بود که اخراج ملل غیر ترک ساکن ترکیه از این کشور اقدامی نژادپرستانه بوده است اما پس از آن نیز عملاً تغییری در سیاست حکومت ترکیه در زمینه انکار نسل کشی ارمنیان ایجاد نشد.

## فعال ترک تبار ترکیه: ارمنیان حق دارند به میهن اجدادی خود بازگردند



این مراسم در شهر "بروکسل" بلژیک برگزار شده است و در آن شماری از اعضای گروه "به ملی گرایی افراطی و تبعیض نه بگو" از ترکیه حضور داشته اند. "لونت سن سور" یکی از اعضای گروه مذکور، یادآور شده است که این گروه یکی از سازمان دهندگان تجمع همه ساله ترک ها و کردهای ترکیه در میدان "تاکسیم" استانبول در سالروز نسل کشی ارمنیانمی باشد. وی افزوده است که اکثر ارمنیانای که در سراسر جهان پراکنده شده اند، ساکن اراضی بوده اند که هم اکنون تحت تسلط ترکیه قرار دارند (اشاره به ارمنستان غربی که در شرق ترکیه کنونی قرار دارد) و ارمنیانمذکور حق دارند به میهن اجدادی خود برگشته و از حقوق شهروندی استفاده نمایند و اموال غصب شده شان را پس بگیرند.

## گسترش روابط ایران و ارمنستان



مهندس "حمید چیت چیان" وزیر نیرو در راس هیئتی روز پنجشنبه ۳۰ آبان ماه وارد جمهوری ارمنستان شد. وی در این سفر سه روزه با رئیس جمهور، وزیر انرژی و منابع طبیعی و وزیر محیط زیست جمهوری ارمنستان دیدار و گفتگو

نمود.

سایت ریاست جمهوری ارمنستان اعلام کرد که "سرژ سرکیسیان" رئیس جمهور این کشور روز گذشته (اول آذر) با "حمید چیت چیان" وزیر نیروی ایران دیدار کرد. رئیس جمهور ارمنستان در این ملاقات ضمن خیر مقدم گویی به وزیر کشورمان گفت: "روابط ما با ایران به عنوان یک همسایه قابل اطمینان و یک دوست خوب در حال توسعه است، ما این روابط را ویژه می دانیم و خواستار تعمیق این روابط هستیم. من فکر می کنم سفر شما به ارمنستان نشان دهنده تمایل مشابه ایران به توسعه روابط است." وی خاطر نشان کرد: "روابط ایران و ارمنستان در سطح بالایی قرار دارد و پتانسیل بسیاری برای گسترش بیشتر این روابط وجود دارد".

در این دیدار دو طرف در زمینه اجرای برنامه های انرژی به عنوان بخشی از همکاری های سودمند دوجانبه گفت و گو کردند.

"چیت چیان" نیز با ابراز علاقه کشور متبوعش برای تعمیق روابط با ارمنستان تصریح کرد: "توسعه روابط با همسایگان از جمله ارمنستان یکی از اولویت های سیاست خارجی ایران است." وی افزود: "روابط ایران و ارمنستان بسیار گرم و خوب است و سال به سال تقویت می شود".


همچنین خبری به نقل از سایت خبری وزارت انرژی ارمنستان، آمده است: "در ادامه این سفر وزیر نیروی ایران با "آرمن موسیسیان" وزیر انرژی ارمنستان دیدار کرد". "موسیسیان" در این دیدار گفت: "هیچ مشکل سیاسی میان دو کشور وجود ندارد و تمام تلاش ما با هدف توسعه و گسترش همکاری اقتصادی و فرهنگی انجام می شود".

وی افزود: "ما پتانسیل بسیاری برای همکاری داریم و باید منتهای تلاش خود را برای استفاده کامل از این پتانسیل ها به کار گیریم".

وزیر انرژی کشورمان نیز گفت: "با توجه به روابط دوستانه ارمنستان و ایران، امیدوارم که بتوانیم روابط خود را توسعه دهیم و از ظرفیت هایی که اشاره شد، استفاده کنیم". "چیت چیان" افزود: "در حال حاضر، ورود به فاز اجرایی دو پروژه بزرگ یعنی ساخت پروژه پردازش خط فشار قوی نزدیکی شهر "مقری" و سومین خط و نایز بالا مهم است".

در این دیدار دو وزیر همچنین در مورد پروژه های مشترک و همکاری منطقه در زمینه برق به بحث و تبادل نظر پرداختند.


## مبانی حقوقی بین المللی تعلق ارمنستان غربی (شرق ترکیه کنونی) به جمهوری ارمنستان



بعد از جنگ جهانی اول در روزهای ۲۵ تا ۲۶ آوریل ۱۹۲۰ میلادی شورای عالی نیروهای متفق و وابسته (Supreme Council of Allied and Associated Powers) شامل بریتانیا، فرانسه، ایتالیا و ژاپن تصمیم گرفتند که از آمریکا بخواهند تا از طریق حکم حکمیت (arbitral award) مرز میان ترکیه و جمهوری ارمنستان را تعیین نمایند. این تصمیم در ۲۷ آوریل ۱۹۲۰ به تایید "آلکساندر میلران"، نخست وزیر و وزیر امور خارجه فرانسه و رئیس کنفرانس صلح، رسید. همچنین، این تصمیم در ماده ۸۹ قرارداد "سور (Sevr)" گنجانده شد و به تایید ارمنستان، ترکیه و ۲۰ کشور امضاء کننده قرارداد مذکور



Map showing the boundaries of Armenia as awarded by PRESIDENT WILSON.



منابع:  
 The Treaties of Peace, 1919-1923 - NY, 1924 - v. I, p. xxxii  
 Papers Relating to Foreign Relations of the United States, 1920 - Washington, 1936 - v. III, p. 780  
 A Dictionary of Arbitration and its Terms (ed. Seide K.) - NY, 1970 - p. 32  
 Wildhaber L. - Treatv Making Power and Constitution - Basel-Stuttgart, 1971 - p. 98  
 Sorensen M. - Manual of Public International Law - New York, 1968 - p. 693-4  
 A Dictionary of Arbitration and its Terms - Ibid - p. 27  
 Wright Q. - The Control of American Foreign Relations - NY, 1922 - p. 38  
